# Քրիստոնյա Հայաստան

2009, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (286)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ



*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում Հայոց բանակի զորահրամանատարներին, զինծառայողներին եւ համայն մեր ժողովրդին՝ Հայոց բանակի օրվա առիթով:*

*Գոհություն Աստծո, որ այսօր զորեղ է մեր բանակը, հաղթական է մեր զինվորների ոգին՝ միշտ աննվազ սիրով ու նվիրումով առ Հայրենին: Այսօր Հայոց բանակի հուսալի պաշտպանությամբ ապահով են մեր երկրի սահմանները, եւ մեր ժողովուրդը խաղաղության մեջ կառուցում է իր նոր, ազատ կյանքը:*

*Աղոթում ենք, որ Տերը Հայոց բանակի սպաներին եւ մարտիկներին իրենց քաջարի եւ ազնվասիրտ ծառայության մեջ պարգեւի նորանոր հաջողություններ: Թող Բարձրյալի օրհնության ներքո միշտ հզոր լինի մեր բանակը, խաղաղ ու բարօր՝ կյանքը մեր Հայրենիքի, աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդի:*

## Սուրբ պատարագ Հայոց բանակի օրվա առիթով

Ավանդույթի համաձայն՝ հունվարի 27-ին, Բանակի օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագիչն էր Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպս Հովհաննիսյանը:

Արարողության ընթացքում Մարկոս սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով հայոց մարտունակ բանակի կարեւորությանը մեր պետականության պահպանման եւ ամրապնդման գործում:

«Մեր բանակն ամբողջությամբ ծառայություն է հայրենյաց, հոգեւոր, ազգային բարձր արժեքներին: Եվ, իհարկե, այդ ծառայությունն իրենից զոհողություն է պահանջում, որը խարսխված է գիտակցված զոհողության եւ սիրո վրա: Եվ եթե այդ զոհողությունը չլիներ, չէր կայանա եւ ոչինչ: Եթե չլիներ բոլորանվեր սերը, ապա ոչ մի ձեռքբերում մեր կյանքում չէր լինի, ամեն ինչ կդառնար ձեւական, եւ մենք չէինք ունենա մեր արժեքներով ուրախանալու եւ ապրելու երջանիկ հնարավորությունը»,- մասնավորապես նշեց սրբազան հայրը:



Սրբազան արարողությանը ներկա էին Հայոց եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը եւ ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմի անդամներ:

Սբ պատարագից հետո Դիվանատանը տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանը, շնորհավորելով ներկաներին առաջիկա տոնի առիթով, ամենքին փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները: Այս առիթով շնորհավորական խոսք ասաց նաեւ ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հունվարի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սմոլենսկի եւ Կալինինգրադի մետրոպոլիտ Կիրիլին՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք ընտրվելու առիթով:



*«Մենք հոգեւոր բերկրանք ենք ապրում, քանզի մեր քույր Եկեղեցին Աստծո կամքով ընտրեց իր արժանի Հովվապետին՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Աթոռի 16-րդ Պատրիարքին:*

*Զբաղեցնելով բարձր եւ պատասխանատու պաշտոններ, իրականացնելով հսկայական հոգեւոր եւ հասարակական գործունեություն՝ Դուք, իբրեւ հոգեւոր առաջնորդ, «նախանձախնդիր բարի գործերի» (Տիտ. Բ 14), արժանացաք Ռուսաստանում եւ նրա սահմաններից դուրս բնակվող ինչպես Ռուս Ուղղափառ, այնպես էլ քույր Եկեղեցիների միլիոնավոր հավատացյալների եւ եկեղեցականների սիրուն եւ հարգանքին»,-* մասնավորապես ասվում է հայրապետական ուղերձում:

Նորին Սրբությունը վստահություն է հայտնել, որ սերտ գործակցությամբ երկու Եկեղեցիները կշարունակեն բարի իրագործումներով հարստացնել դարավոր բարեկամությունը հանուն Եկեղեցիների պայծառության եւ ի մխիթարություն եւ բարօրություն երկու ժողովուրդների եւ երկրների:

Անսասան հովվապետական գավազան եւ կենաց արեւշատություն մաղթելով նորընտիր Պատրիարքին՝ Վեհափառ Հայրապետը հայցել է Բարձրյալ Տիրոջից, որ նրա գահակալության տարիները վերածնենի մի նոր շրջան դառնան Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ բարեպաշտ հոտի համար:

▼▼▼

**Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մոսկվա մեկնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակությունը՝ մասնակցելու Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի եւ Համայն Ռուսիո նորընտիր Պատրիարք Կիրիլ Ա-ի գահակալության արարողությանը: Պատվիրակության կազմում էին Եզնիկ արք. Պետրոսյանը, Եզրաս եպս Ներսիսյանը, Մարկոս եպս Հովհաննիսյանը եւ Հովակիմ վրդ. Մանուկյանը:**

## Նշանակում պատրիարքի փոխանորդի

Սբ Հակոբյանց միաբանության ուխտի կանոնի (1888) թիվ 46 հոդվածի համաձայն՝ Երուսաղեմի հայ պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկյանը պատրիարքի փոխանորդ է նշանակել պատրիարքարանի լուսարարապետ Նուրհան արք. Մանուկյանին: Նուրհան արք. Մանուկյանը, իր պարտավորությունների հետ միասին, պիտի հսկի նաեւ այլ բաժանմունքների գործունեությանը՝ ըստ միաբանության ուխտի կանոնների:

*Երուսաղեմի հայ պատրիարքություն*

## 26 հունվարի

# ՍՈՒՐԲ ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ



Հայաստանը Է-Ը դդ. գտնվում էր արաբական տիրապետության տակ: Այդ լուծն ավելի ծանր էր, քան բյուզանդական եւ պարսկական իշխանությունների օրոք էր: Ժողովուրդը ենթարկվում էր դաժան հարկահանության, եւ երկիրը շուտով բոլորովին սպառվեց՝ մատնվելով սովի ու աղքատության:

Երբ արաբները գրեթե անպաշտպան գտան Հայաստան աշխարհը, սկսեցին սարսափելի հալածանքներ ծավալել քրիստոնեության դեմ: 704 թ. ամիրապետ դարձավ Մրվանի որդի Աբդլմելեքը, որը ցանկացավ դավադրություն կազմակերպել հայ նախարարների դեմ: Նրա հրահանգով Նախիջեւանի Կաշմ անունով ոստիկանը, խաղաղության դաշինք կնքելու պատրվակով, բոլոր հայ նախարարներին ու իշխաններին հրավիրեց Նախիջեւան քաղաք: Հայոց իշխանները, չզգալով խաբեության նշույլ իսկ, գալիս ու ժողով են գումարում քաղաքում: Եվ երբ հավաքվում են տեղի մեծ, փայտաշեն եկեղեցում՝ կառավարությանը տալու հավատարմության երդում, նույն պահին արաբները փակում են եկեղեցու դռները, աղյուսներով ամրացնում ու հրկիզում եկեղեցին՝ նախապես զինաթափ անելով նախարարներին:

Նույն անգթությունը գործադրվեց նաեւ Խրամ ու Դվին քաղաքներում. եկեղեցում արգելափակվեցին ու հրկիզվեցին 700 հոգուց բաղկացած հայ ազատանիի գնդերը: Զոհվածների ընտանիքների անդամներից մի մասը կալանավորվեց ու տանջամահ արվեց, իսկ մյուսները գերեվարվեցին Ասորիք՝ Դամասկոս քաղաք: Գերյալների մեջ էին Վահան Կամսարականի դուստր Շուշանը, որը հանուն հավատի՝ դառը տանջանքներն արիաբար կրելուց հետո նահատակվեց, ինչպես նաեւ Գողթնյաց գավառի իշխան Խոսրովի չորսամյա որդին՝ Վահանը:

Իշխանազուն հայորդին օտար արքունիքում ստանում է կրթություն՝ ընդունելով մահմեդականություն: Շուտով կրթության ընթացքում ցուցաբերած իր փայլուն ընդունակությունների շնորհիվ կարգվում է արքունի դիվանապետ ու դպրապետ: Այդ տարիներին Հայոց աշխարհը ծանր ճգնաժամ էր ապրում. արդեն Ը դարասկզբին լայն տարածում են գտնում պատկերամարտական եւ աղանդավորական այլ շարժումները: Օրվա կաթողիկոս Ս. Հովհան Օձնեցին (717-728), որ հայտնի էր իր իմաստությամբ, սկսեց լուրջ պայքար ծավալել այդ հոսանքների դեմ: Այդ նպատակով Դվինում նա մի ժողով գումարեց Հայ Եկեղեցու բարեկարգման եւ աղանդներից ազատագրման խնդիրների շուրջ: Շուտով նրա իմաստության ու սրբակենցաղ վարքի մասին իմանում է նաեւ Օմար ամիրապետը, որը նրան անձնապես տեսնելու ցանկություն է հայտնում: Հայոց կաթողիկոսը, չմերժելով նրա հրավերը, իր շքախմբով ժամանում է Դամասկոս, ուր եւ մեծ ընդունելության է արժանանում: Հայրապետի շքեղ հանդերձներն ու արդուզարդը տարակուսանքի են մատնում ամիրապետին, եւ երբ վերջինս նրան հայտնում է այդ առթիվ ունեցած իր երկմտանքը, ապա հայրապետը խնդրում է ներկաներին դուրս գալ սրահից, իսկ ինքը, հանելով իր ճոխ հանդերձանքը, ամիրապետին ցույց է տալիս մարմնին կպած քուրձը (ուղտի կամ այծի մազերից հյուսված ճգնավորի հագուստ)՝ արտաքին շքեղությունը վերագրելով ժողովրդի վրա այդկերպ ազդելու դիտավորությանը: Կաթողիկոսն իր իմաստուն խոսքերի շնորհիվ արժանանում է ամիրապետի համակրանքին: Այս ամենից հետո վերջինս խոստանում է խաղաղություն շնորհել Հայաստանին: Այսպես, 719 թ.՝ սբ Հովհան Օձնեցու այցից հետո, բացվում են հայերի գերեդարձության դռները. հայ գերյալներին թույլատրվում է անարգել վերադառնալ հայրենիք:

Օգտվելով առիթից՝ Վահան Գողթնացին նույնպես հայտնում է հայրենիք մեկնելու իր ցանկությունը, բայց ամիրապետը, որ շատ էր սիրում նրան, թույլ է տալիս գնալ՝ միայն վերադառնալու պայմանով: Հայրենիքում Վահան Գողթնացին ստանձնում է հայրական գավառի իշխանությունը եւ ապաշխարությամբ զղջալով՝ նորից ընդունում է քրիստոնեությունը: Այդ ընթացքում նրան է հասնում Օմար ամիրապետի մահվան լուրը (720 թ.), ուստի Վահանն այլեւս չի կամենում վերադառնալ Դամասկոս, այլ ամուսնանալով Սյունյաց Բաբկեն նախարարի դստեր հետ՝ շուրջ 10 տարի ապրում է հայրենի երկրում: Սակայն Օմարի հաջորդը, տեղեկանալով Գողթնացու կրոնափոխության մասին, հալածանքներ ու հետապնդումներ է կազմակերպում նրա դեմ: Վահանը, կասկածելով, որ արաբները կմատնեն իրեն, թողնում է իր ընտանիքը եւ թաքնվում վանքերում՝ կրոնավորի պաշտոնով: Բայց երբ պարզ է դառնում, որ թաքնվելու հնար չկա, ինքը գնում է Դամասկոս եւ անձնապես ներկայանում ամիրապետին: Վերջինս նրան խոստանում է փառք ու պատիվ՝ նախկին կրոնին դառնալու դեպքում, սակայն՝ ապարդյուն: Տեսնելով Վահանի անսասանությունը քրիստոնեական կրոնի նկատմամբ՝ նա իր զինվորականներին հրամայում է գլխատել նրան: Երանելի Վահան Գողթնացին նահատակվում է Դամասկոսում 738 թ.:

Համաձայն եկեղեցական ավանդության՝ նրա մարմնից լույս էր ճառագում, իսկ մի մահամերձ, դիպչելով նրա նշխարներին, բժշկություն է գտնում: Քրիստոնյաները, գաղտնի կերպով վերցնելով նրա մարմինը, հանդիսավորապես թաղում են եւ ի պատիվ նրա՝ մի վկայարան կառուցում:

Վահան Գողթնացու քույրը՝ Խոսրովադուխտը, եղբորը նվիրված մի շարական է գրել, իսկ Արծկեի Երաշխավորաց վանքի վանահայր Արտավազդ վարդապետն էլ Գողթնացու նահատակությունից 7 տարի անց գրի է առնում նրա վկայաբանությունը: Սուրբ Վահան Գողթնացու հիշատակը Հայ Եկեղեցին այս տարի նշում է հունվարի 26-ին է:

*Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

---

## 7 փետրվարի

# ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՈՐԱՎԱՐ



Հայ Առաքելական Ս. Եկեղեցին այս տարի փետրվարի 7-ին է տոնում սբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի եւ 14 զինվորների հիշատակի օրը:

Քաջ զորավար սբ Սարգիսն ազգությամբ հույն էր եւ ապրում էր կապադովկյան Կեսարիայի Գամիրք գավառում:

Երբ Հռոմի կայսրն էր Կոստանդիանոս Մեծը, սբ Սարգիսը նրա բանակի զինվորականներից մեկն էր: Դա համընկավ այն ժամանակների հետ, երբ Կոստանդիանոս կայսեր հրամանով քրիստոնեությունը թույլատրելի կրոն էր համարվում: Քրիստոնյա Սարգիսն «իր բարեպաշտ հավատքով սկսեց շողալ իբրեւ լուսապայծառ աստղ կապադովկիացիների աշխարհում»:

Զարմանալի հավատի տեր այդ զորականն ամենուր քարոզում էր Ս. Ավետարանը, քանի որ «զորացած էր Սուրբ Հոգով եւ սիրելի էր Աստծուն ու բոլորին, եւ ինչ որ ձեռնարկում էր, Աստված հաջողությամբ էր պսակում»:

Շուտով պատերազմներում ցուցաբերած նրա բազում հերոսություններն ու առաջխաղացումները հայտնի դարձան թագավորին, եւ վերջինս նրան, մեծամեծ պարգեւներից զատ, զորավարի կոչում շնորհեց: Սակայն այդ մեծ պատվին արժանանալով՝ նա «չգործադրեց ի շահ նյութականի ու սնոտի փառքի, այլ հոգեւորի եւ աստվածայինի», այն է՝ քանդեց հեթանոսական մեհյաններն ու տաճարները, իսկ փոխարենը եկեղեցիներ կառուցեց, շատ մարդկանց հավատքի բերեց եւ աղքատներին օգնեց ու հովանավորեց:

Բայց երբ գահ բարձրացավ Հուլիանոս Ուրացող կայսրը, փակվեցին քրիստոնեության ազատ ճանապարհները: Հեթանոս կայսրն սկսեց քրիստոնյաներին ուղղված իր հալածական արշավանքները. ավերվեցին եկեղեցիները, նահատակվեցին բազմաթիվ հոգեւորականներ ու հավատացյալներ, սկսվեց արտագաղթ:

Քաջ զորավարը ծանր ապրումների եւ խոհերի մեջ էր երկրի այդ շրջադարձի առթիվ, երբ մի օր տեսիլքով երեւաց նրան Հիսուսն ու ասաց. «Ժամ է, ո՛վ Սարգիս, հեռանալ քո աշխարհից եւ քո ազգից՝ Աբրահամ նահապետի օրինակով, եւ գնալ այն աշխարհը, ուր քեզ ցույց կտամ. այնտեղ քեզ մարտիրոսության պսակ է պատրաստված»:

Նույն օրը լուր հասավ, թե Հուլիանոս կայսրը որոշում է կայացրել Ալեքսանդր Մակեդոնացու պես տիրել ողջ աշխարհին եւ արդեն պատերազմ է հայտարարել պարսից արքային:

Սուրբ Սարգիսը, տեսիլքից սթափվելով, զգաց, որ ժամանակն է լքելու հայրենիքը, քանի որ անհնարին էր տեսնում իր գործակցությունը կամ մասնակցությունը այդ ավերիչ արշավանքներին: Շուտով նա վաճառում է իր տունն ու կալվածքը, ստացված դրամը բաժանում է աղքատներին եւ որդու՝ Մարտիրոսի հետ ճանապարհվում է դեպի սահմանակից քրիստոնյա Հայաստան:

Այստեղ հռչակավոր զորավարին մեծաշուք ընդունելության է արժանացնում Խոսրովի որդին՝ Տիրան թագավորը: Բայց մի որոշ ժամանակ անց Տիրանը, Հուլիանոսից երկյուղ կրելով, թե «գուցե վերջինս սպարապետի ապաստանը բացահայտելու դեպքում խռովություն ստեղծի», խորհուրդ է տալիս նրան Պարսկաստան գնալ:

Սուրբ Սարգիսը Հայաստանից Պարսկաստան է անցնում եւ ընդունելություն գտնում արքունիքում: Շապուհը նրան մի ամբողջ բանակ է տրամադրում:

Այստեղ նորից սկսվում են նրա հաղթարշավները, որոնք քաջ զորավարը «ոչ թե իր անձի քաջությանն էր վերագրում, այլ Աստծո զորությանը», ինչն էլ ուսուցանում էր իր զինվորներին: Նրա հորդորներով զինվորներից ոմանք քրիստոնեություն ընդունեցին եւ մկրտվեցին: Մինչդեռ Պարսից Շապուհ արքան հայտնաբերեց զորավարի քրիստոնյա լինելը եւ իսկույն նրան արքունիք կանչեց:

Երբ սուրբ զորապետը թագավորական պալատ է ժամանում, արքան մեծամեծ նվերներ տալուց հետո պահանջում է, որ նա արքայական մեհյանում կուռքերին զոհ մատուցի: Ս. Սարգիսը խստիվ մերժում է հրամանն ու հրապարակավ անարգում կուռքերը՝ ասելով. «Ես իմ անձն եմ զոհ մատուցում ճշմարիտ Աստծուն եւ Նրա Որդի Հիսուս Քրիստոսին, Ով պատարագվեց հանուն ինձ»:

Սրանից հետո Շապուհը կարգադրում է ամենադաժան տանջանքների ենթարկել նրան: Երբ մի պահ Սարգիսը խնդրում է իրեն կուռքերի մոտ տանել, բոլորը կարծում են, թե զորավարն ուզում է հավատափոխ լինել, եւ ուրախացած առաջնորդում են նրան հիշյալ տեղը: Բայց ի հիասթափություն նրանց՝ սուրբը, աղոթելով ու խաչակնքելով, իր ձեռքի շղթաներով խիզախորեն ջարդուփշուր է անում այդ ձեռակերտ շինությունները:

Այս տեսարանից մոլեգնած՝ քրմերը նահատակում են նրա Մարտիրոս որդուն եւ ձերբակալում ու բանտ են նետում նրան: Երբ դաժան տանջանքների ենթարկելուց հետո պարզ է դառնում, որ զորավարը միայն իր կրոնին է հավատարիմ, թագավորի հրամանով նրան տանջագույն մահվան են դատապարտում: Այն ժամանակ քրիստոնյա 14 պարսիկ զինվորները վերցնում են սրբի մարմինը եւ զգեստավորում մաքուր հանդերձներով:

Շուտով այս մասին էլ են հայտնում թագավորին, որը զայրացած հրամայում է սպանել այդ զինվորներին, իսկ մարմինները գազաններին ձգել:

Ի զարմանս ներկաների՝ ոչ մի գազան չի դիպչում նահատակների մարմիններից եւ ոչ մեկին: Այդժամ հավատացյալները թաղում են Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի եւ 14 զինվորների սուրբ մարմինները:

Վերոհիշյալ նահատակությունը կատարվեց 363 թ. ի հունվարի 31-ին:

Սուրբ Սարգսի մասին կան մի շարք ժողովրդական ավանդություններ: Նրա տոնին նախորդող պահքի վերջին օրը տանիքում՝ ափսեի մեջ, փոխինձ էին դնում՝ հուսալով, թե սբ Սարգիսը իր ձիով անցնելիս չի անտեսի նրանց, եւ պայտի հետքը կմնա փոխինձի մեջ, որից հետո կկատարվի իրենց երազանքը:

Հայ միջնադարյան մանրանկարչությունում սբ Սարգիսը պատկերվում է ձիով՝ վիշապի հետ մենամարտելիս, որը չարության խորհրդանիշն է:

*Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

---

# Հանդիպում Հռոմում

Հունվարի 24-31-ը Հռոմում գումարվել է Կաթոլիկ Եկեղեցու եւ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ Աստվածաբանական երկխոսության համատեղ միջազգային հանձնախմբի հանդիպումը:

Ժողովը, որ նախագահում էին Հռոմի Քրիստոնեական միության քահանայապետական խորհրդի նախագահ կարդինալ Վալտեր Կասպերը եւ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Դամիեթեի մետրոպոլիտ Ամբա Բիշոյը, քննարկում էր երկխոսության հինգ տարվա արդյունքում ստեղծված «Եկեղեցու բնույթը, սահմանադրությունը եւ առաքելությունը» խորագրով փաստաթուղթը: Հանձնախումբը որոշեց երկխոսության հետագա ընթացքը:

Ժողովին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացնում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, ինչպես նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից Տ. Օշական արք. Չոլոյանը եւ Տ. Նարեկ եպս Ալեմեզյանը:

*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՊՈՂՈՍ Բ ԳԱՌՆԵՑԻ

## (1418-1430)

Երուսաղեմի պատրիարք Պողոս Գառնեցին ոչ միայն կարողացավ Գրիգոր Խանձողոտ կաթողիկոսին հեռացնել հովվապետությունից, այլեւ տիրել թափուր աթոռին: Այդ մասին պատմությունը մանրամասներ չի պահպանել, սակայն անտարակույս է, որ ի դեմս նրա՝ Հայոց Եկեղեցին ձեռք բերեց մի շատ արժանավոր հոգեւորականի: Դատելով նրա գործունեության վերաբերյալ մեր համեստ գիտելիքներից՝ կարելի է ասել, որ նա կաթողիկոսական աթոռին տիրացավ ոչ թե այնպիսի կեղտոտ միջոցներով, ինչպես արել էին Կարապետ Ա եւ Հակոբ Գ կաթողիկոսները, այլ կարողացավ ընդունելի միջոցներով իր կողմը գրավել ամիրային եւ հայ հոգեւորականությանը: Սակայն, իհարկե, վիճակն այնպիսին էր, որ նա երբեմն-երբեմն ստիպված էր դիմելու նաեւ ապօրինի քայլերի: Համենայն դեպս, նա կաթողիկոս ձեռնադրվեց ընդհանուր հավանությամբ: Սսից վերադառնալուց հետո նրան Երուսաղեմից հրավիրեցին եւ հովվապետ կարգեցին: Լինելով Արեւելյան եպիսկոպոսներից, սովորած լինելով բուն Հայաստանում՝ նա հեռու էր աղթարմայությունից, որով իսկ շահել էր Գրիգոր Տաթեւացու աշակերտների վստահությունը: Եթե այդպես չլիներ, ապա նա ոչ մի կերպ չէր տիրանա Երուսաղեմի պատրիարքությանը: Ավելին. նրա կաթողիկոսանալը հավաստում է, որ աղթարմայությունն սկսել էր Հայաստանում թուլանալ:



Պողոսը կաթողիկոսական աթոռ բարձրացավ հենց նույն՝ 1418 թվին. այդ են վկայում բոլոր հիշատակարանները: Նա հովվապետեց, ըստ հիշատակարանների, մինչեւ 1428 թիվը, սակայն Առաքել Դավրիժեցին նրա հաջորդի հովվապետելը դնում է 1430 թվին՝ նրան հատկացնելով հովվապետության 12 տարի, ինչն ընդունում է նաեւ Մ. Օրմանյանը: Պարզ թյուրիմացություն պետք է համարել նրա՝ 2 տարով ընդամենը կաթողիկոսանալու տեւողությունը: Հայրապետանիստ վանքի Սուրբ Աննա եկեղեցու արձանագրությունը հավաստում է, որ այն 1423-ին կառուցվել է Պողոս կաթողիկոսի ծախսով: Իր դիրքերն ուժեղացնելու համար նա Արեւելքից, այսինքն՝ բուն Հայաստանից բերեց քերթողաձաղիկ փիլիսոփաներ եւ ճգնավորներ, վարդապետներ, աբեղաներ ու այլ կրոնավորներ եւ հայրապետանիստը զարդարեց գեղեցկակամար շինվածքներով, մասնավորապես Սուրբ Աննայի հորինվածքով: Նա տներ կառուցեց կաթողիկոսարանի միաբանների համար: Պարզորոշ երեւում է, որ Սսի աթոռը գրեթե հասել էր քայքայման աստիճանի, իսկ տեղի եպիսկոպոսները եւ վարդապետները կամովին կամ բռնադատված ստիպված էին ընդունել ոչ միայն նրա հովվապետությունը, այլեւ եկեղեցական բարենորոգումները: Եթե ճիշտը խոստովանենք, ապա Պողոս կաթողիկոսի այս ձեռնարկումները հետաձգեցին կաթողիկոսարանի տեղափոխումը մայր երկիր: Ավելին. Արեւելյան եպիսկոպոսները սատար կանգնեցին Պողոս կոթողիկոսի գործունեությանը:

Այս ընթացքում Պողոս կաթողիկոսը կամեցավ Երուսաղեմ այցելել՝ ոչ միայն տեղի գործերը կարգավորելու, այլեւ անհրաժեշտ միջոցները եւ անձինք Սիս բերելու նպատակով: Սակայն Մ. Օրմանյանի կարծիքով՝ 1419-ին գրված «Ճառընտիրը» եւ 1422-ին գրված «Յայսմաւուրք»-ն ու «Տարեգիրքը» թույլ չեն տալիս այդ ամենը կապելու նրա ուղեւորության հետ, քանի որ դրանք նա կարող էր իրագործել հեռակա կարգով: Ուստի Եկեղեցու մեծ պատմաբանը նրա ուղեւորությունը Երուսաղեմ դնում է հայրապետանոցի կառուցումներից հետո: Մի ժամանակագրի համաձայն՝ 1424 թվին Կոստանդին թագավորի թոռը բազմաթիվ իշխանների եւ նրանց ազգակիցների հետ տեղափոխվում է Կիպրոս: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ այդ գաղթը դրվում է 1426 թվին: Իսկ չէ՞ որ եգիպտացիների կողմից 1426-ին տեղի ունեցավ մեծ արշավանք Կիլիկիա եւ Սիս, հետեւաբար գաղթը պետք է կապել պատերազմի արհավիրքի հետ: Մուզաֆեր սուլթանին չկարողացան դիմադրել Ռամազանյանները, եւ հայերը՝ շուրջ 30000 մարդ, ստիպված եղան գաղթել «յայնկոյս ծովու» եւ հաստատվել Կիպրոսում:



Միակ հակասությունն այն է, որ Եգիպտոսում 1422-ից իշխում էր Բուրսբեյ Աշրաֆը եւ ոչ թե Մուզաֆերը, որը կա՛մ սուլթանի փոփոխված անունն է, կա՛մ էլ եգիպտական զորքի հրամանատարի անունը: Թերեւս այդ ժամանակ էլ Պողոսը հանգրվանել է Երուսաղեմում, որը եգիպտացիների տիրապետության տակ էր: Չի բացառվում, որ Երուսաղեմից Եգիպտոս էլ գնացած լինի: Մ. Օրմանյանը հայոց կաթողիկոսի ուղեւորությունը դնում է 1424-ի եւ 1426-ի միջոցին, սակայն մենք հակված ենք այն դնելու արշավանքի կա՛մ նախօրեին, կա՛մ դրա ընթացքում: Թերեւս նրա այդ ուղեւորության շնորհիվ Կիլիկիայում հաստատվեց բավականին երկարատեւ հարաբերական խաղաղություն:

Ծանր էր վիճակը բուն Հայաստանում, հատկապես Իսկքանդարի կամ Իսքենդերի գահակալության շրջանում: Նա 1422-ին փոխարինել է հորը՝ Կարա-Յուսուփին՝ հաստատվելով Թավրիզում, եւ դարձել պատուհաս երկրի համար: Նրա օրոք երկիրը բռնված էր խռովություններով ու հուզումներով, իսկ պատերազմները լենկթեմուրյանների դեմ շարունակվում էին: Նա մեծ կոտորածներ կազմակերպեց Ծղակ եւ Աղուվանք բերդերում եւ հարձակվեց Խլաթի երկրամասի վրա: Ասպատակության ենթարկվեց Սյունիքը, 1423-ին գրավեց Բաղեշը եւ ավերեց, չորս ամիս պաշարեց Վանը, սակայն այն գրավել չկարողացավ: Բայց այդ ընթացքում քաղաքում շատերը մահացան սովից եւ ջրի պակասից: 1424 թ. հանդարտ անցավ, 1425 թ. դարձյալ արշավեց Վանի վրա: Այս անգամ նա գրավեց Վանը եւ Աղթամարը եւ ահավոր կոտորածներ կազմակերպեց: 1426-ին նա ասպատակեց Արծկեի կողմերը եւ հասավ մինչեւ Որմի (իմա՛ ներկայիս Ուրմիա): 4 ամսվա ընթացքում գրավեց Սուլթանիան եւ այնպիսի անգթություններ կատարեց, որ նորոգեց պատերազմը Լենկթեմուրի հետ, որի ներկայացուցիչն էր Շահռուխը: Վերջինս, որ իրեն համարում էր Իսքենդերի ենթակայության տակ գտնվող երկրի տիրակալը, 1427 թ. մեծ զորքով հարձակվեց Իսքենդերի վրա, որը մի կերպ փախուստով ազատվեց: Շահռուխի զորքերն էլ երկիրն ավերեցին եւ ձմռանը հաստատվեցին Մուղանի դաշտում: Վասպուրականը եւ հատկապես Քաջբերունիքը Իսքենդերի կողմից խիստ ավերվեցին՝ դառնաշունչ ձմռանը դժվարին պայմաններ ստեղծելով հայ բնակչության համար: Մարդիկ պարզապես փախչում էին Վանա լճի կղզիները: Ինքը՝ Մեծոփեցին, ստիպված էր ապաստանել Լիմ կղզում: Փախստականների թիվն այնքան մեծ էր, որ նրանց համար անգամ նստելու տեղ չկար: Դրանից օգտվելով՝ Ամյուկի իշխան Հաջիբեկը մի գիշերվա մեջ բռնությամբ 100000 դահեկանի ոսկի եւ արծաթ բռնագրավեց փախստականներից (իբրեւ թե բռնագրավվել էր 40000 դահեկան, բայց իրականում այն կազմել է 100000): Վիճակն օգտագործեցին ակ-կոյունլուները, որոնք ձմեռվա երեք ամիսների ընթացքում սկսեցին ասպատակել կարա-կոյունլուների երկրամասերը: Սակայն 1429 թվին՝ գարնանը, Իսքենդերը վերադարձավ եւ պաշարեց Արծկեն, որտեղ նրա վրա հարձակվեց Շահռուխի որդի Ջոնկան, թեեւ հաջողության չհասավ: Թաթարները պարտվեցին, իսկ Իսքենդերն արշավեց Բասեն:

Շարունակությունը՝ էջ 4

## ՏԻԽՈՆ ԶԱԴՈՆՍԿԻ

# ՄԱՐՄԻՆ ԵՎ ՀՈԳԻ

«Նրանք, որ ըստ մարմնի են, մարմնին են խորհում, իսկ նրանք, որ ըստ հոգու են, հոգունը. քանի որ մարմնավոր խորհուրդը մահ է, իսկ հոգեւոր խորհուրդը՝ կյանք եւ խաղաղություն. քանզի մարմնավոր խորհուրդը թշնամություն է առ Աստված, որովհետեւ չի հնազանդվում Աստծու օրենքին. եւ նա ոչ իսկ կարող է: Նրանք, որ մարմնի իշխանության տակ են, չեն կարող հաճելի լինել Աստծուն» (Հռոմ. Ը 5-8): «Եթե մեկը Քրիստոսի Հոգին չունի, նա Նրան չի պատկանում» (Հռոմ. Ը 9): «Այդպես, ուրեմն, եղբայրնե՛ր, մարմնին չէ, որ պարտական ենք՝ ըստ մարմնի ապրելով, որովհետեւ, եթե ըստ մարմնի ապրենք, կմեռնենք, իսկ եթե հոգով մարմնի գործերը սպանենք, կապրենք» (Հռոմ. Ը 12-13): «Նրանք, որ առաջնորդվում են Աստծու Հոգով, նրանք են Աստծու որդիները» (Հռոմ. Ը 14):

«Մարմնին խնամք մի՛ տարեք՝ ցանկությունները գոհացնելու համար» (Հռոմ. ԺԳ 14):

«Հոգո՛վ ընթացեք եւ մարմնի ցանկությունը մի՛ կատարեք, քանի որ մարմինը հոգու հակառակն է ցանկանում, իսկ հոգին՝ մարմնի հակառակը: Եվ քանի որ սրանք միմյանց հակառակ են, մի՛ արեք այն, ինչ ուզում եք» (Գաղ. Ե 16-17):

«Հոգու պտուղներն են՝ սեր, խնդություն, խաղաղություն, համբերություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն» (Գաղ. Ե 22-23):

«Ով սերմանում է իր մարմնի համար, այդ մարմնից էլ կհնձի ապականություն, իսկ ով Հոգու համար է սերմանում, այդ Հոգուց էլ կհնձի հավիտենական կյանք» (Գաղ. Զ 8):

### Դասողություններ մարմնի եւ հոգու մասին

Մարդը, ով ընդունել է քրիստոնեական հավատը, ձեռք է բերում երկու օրենք՝ մարմնի օրենքը եւ հոգու օրենքը. այն է՝ մարմնական օրենք եւ մտքի օրենք, ինչպես պատկերացրել է Պողոս առաքյալը՝ ասելով. «Իմ մարմնի անդամների մեջ տեսնում եմ այլ օրենք, որ պայքարում է իմ մտքի օրենքին հակառակ եւ ինձ գերի է դարձնում մեղքի օրենքին, որ կա իմ մարմնի անդամների մեջ» (Հռոմ. Է 23): Պողոս առաքյալն ասում է նաեւ՝ մարմին ու հոգի. «Մարմինը հոգու հակառակն է ցանկանում, իսկ հոգին՝ մարմնի հակառակը: Սրանք միմյանց հակառակ են» (Գաղ. Ե 17):

### Մարմնի օրենքի եւ հոգու օրենքի տարբերությունները

Այս երկու օրենքների մեջ կա անդադրում հակամարտություն. ինչը, որ շատ է ցանկանում մեկը, մյուսը՝ մերժում է. այն, ինչ ուզում է մարմինը, հոգին չի ուզում:

Մարմինը կամենում է հպարտանալ, մեծարվել, հռչակվել, իսկ հոգին՝ ողջախոհ դառնալ:

Մարմինն ուզում է փառքի ու պատվի մեջ լինել, իսկ հոգին էլ «այդ ամենը աղբ է համարում» (Փիլիպ. Գ 8):

Մարմինն ուզում է հանգստանալ, իսկ հոգին՝ առույգություն, աշխատանք:

Մարմինն ուզում է տոնակատարություն, արբեցում, ուրախություն, իսկ հոգին՝ ժուժկալություն, պահեցողություն, մեղքերի մասին խորհում:

Մարմինն ուզում է վրեժխնդիր լինել իր թշնամիներից, իսկ հոգին՝ սիրել իր թշնամիներին, իրեն ատողներին բարիք գործել:

Մարմինն ուզում է գողանալ ուրիշինը, իսկ հոգին՝ իր ունեցածը բաժանել կարոտյալներին:

Մարմինն ուզում է հագուրդ տալ իր ցանկասիրական կրքերին, իսկ հոգին՝ ողջախոհությանը:

Մարմինն ուզում է իր կամքն ամբողջությամբ կատարել, իսկ հոգին՝ Աստծո:

Այդպես, ի վերջո, մարմինն ու հոգին անվերջ հակառակվում են միմյանց:

### Մարմնական ու հոգեւոր մտածության տարբերությունները

Այս երկու հակադրությունների մտածումները եւս հակադիր են լինում. կա մարմնական մտածում եւ հոգեւոր մտածում:

Մարմնական մտածումն այն է, երբ արվում է այն, ինչ կամենում է մարմինը, իսկ հոգեւորը՝ այն, ինչ հոգին է ցանկանում:

Մարմնական մտածումը հպարտությունն է, մեծամտությունը, ցանկասիրությունը, անզսպությունը, անառակությունը, անմաքրությունը, արծաթսիրությունը, ագահությունը, տրտնջանքը, չարախոսությունը, թշնամությունը, վեճը, քինախնդրությունը, վրեժխնդրությունը եւ այն ամենը, ինչը դեմ է Աստծո օրենքին:

Հոգեւոր մտածումը հնազանդությունն է, զսպվածությունը, ողջախոհությունը, մաքրությունը, համբերությունը, խաղաղությունը, երկյուղածությունը, անհիշաչարությունը եւ այն ամենը, ինչն Աստծո օրենքն է կամենում:

Այդ երկու՝ միմյանց հակադիր, երկակի մտածումներից մարդը դառնում է հակասական՝ մարմնավոր եւ հոգեւոր: Մարդն ինչպես մտածում է, այնպես էլ կոչվում է: Ով լսում է մարմնին եւ ունենում մարմնավոր մտածումներ, մարմնավոր մարդ է կոչվում, իսկ ով լսում է իր հոգուն եւ մարմինը ենթարկում հոգուն, կոչվում է հոգեւոր մարդ:

### Մարմնավոր եւ հոգեւոր մարդու նշանները

Մարմնավոր մարդն իր ողջ խելքն ու մտածումներն ուղղում է ժամանակավորի



ձեռքբերմանը, իսկ հոգեւոր մարդը ձգտում է մշտապես հավիտենականին:

Մարմնավոր մարդն իր կոչումը տեսնում է միմիայն իր ժամանակավոր շահի մեջ, իսկ հոգեւոր մարդը ջանք է թափում հանուն Աստծո փառքի եւ իր մերձավորների շահի:

Մարմնավոր մարդը, եթե գովեստի արժանի ինչ-որ բան է անում, իր ժամանակի մեջ է փնտրում հատուցում, իսկ հոգեւոր մարդն Աստծուց է սպասում իր հատուցումը՝ ապագայում:

Մարմնավոր մարդը, թեպետ գովեստի արժանի բաներ է անում, սակայն դա անում է փառասիրությունից եւ սին փառքից դրդված, իսկ հոգեւոր մարդու բոլոր նպատակներն ուղղվում են Աստծո փառքին՝ հավիտենական կյանքի հույսով:

Մարմնավոր մարդն ամենքի առջեւ հպարտանում է, մեծամտանում, նա իրեն հավասարը չունի, ամենքից վեր է դասում իրեն, բոլորին արհամարհում է, իսկ հոգեւորն Աստծու եւ մարդկանց առաջ պահում է իրեն համեստորեն:

Շարունակությունը՝ էջ 7

# ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ

## (Մոտ 1575-1625)



*Սկիզբը՝ 2008, թիվ 24, 2009, թիվ 1*

Մոկացին արձագանքել է նաեւ իր ժամանակ տեղի ունեցած պատմական իրադարձություններին: Այդպիսին է *«Գանձ նոր նահատակին եւ սուրբ քահանային Անդրէասի նախճաւանցւոյ, որ կատարեցաւ ի Շահ-Աբասէն. ասացեալ շնորհալի վարդապետին Բեղլու Ներսէս կոչեցեալ Մոկացի»* երկը (295 տող): Խոսքի հերոսը տեր Անդրեաս քահանան է, որը 1617-ին Շահ Աբասի՝ Ագուլիս կատարած այցի ժամանակ խուզել էր մանուկների մազերը, տգեղացրել, որպեսզի փրկի մանկաժողովից: Գաղտնիքը բացվում է: Նրան ստիպում են կրոնափոխ լինել, մերժում է եւ տանջանքների մեջ նահատակվում: Եկեղեցին սրբացնում է նրան եւ հիշում տոնացույցի մեջ: Ահա այդ կապակցությամբ էլ Մոկացին հորինել է հիշյալ գանձը, ինչպես նաեւ *«Եկայք նորազուարճ մանկունք եկեղեցոյ»* տաղը:

Գանձը պատմողական բնույթ ունի, ներկայացնում է Անդրեասի գործունեությունը որպես հոգեւոր գործիչ եւ ուսուցիչ, որը Շահ Աբասի գալստյան ժամանակ խափանում է անօրեն պարսիկի չար դիտավորությունները.

*Ձիերս տղայի*
*Յապաւէ նախկի,*
*Զի տգեղացի,*
*'Ի ինքն պատրաստի*
*Դէմ կալ վտանգի*
*Փործութեանց չարի... (էջ 196):*

Անդրեասն այսպես՝ կյանքով պատասխան է տալիս իր արարքի համար եւ հերոսանում: Իրական անձնազոհ մի հոգեւորական, որ նաեւ հայրենասեր գործիչ էր, ահա, առանձնանում է բազմաց միջից եւ նոր ժամանակների ու նոր փործությունների դիմաց օրինակ տալիս ապրելու եւ գործելու (Անդրեաս քահանայի արարքի եւ նահատակության մասին հետագայում Մուրացանը գրեց «Անդրեաս Երեց» պատմավեպը):

Հոգեւոր փառաբանական բնույթ ունի նաեւ *«Ներողեան վիպասա[նա]կան ի փոխումն Աստուածածին կուսին եւ յաղագս պատկերին սրբոյ, որ բերեալ հանգուցաւ [տ]եսչութեամբ հոգոյն ի սահմանս Անձեւացեաց, ի տեղին կոչեցեալ Հոգոց վանք»* (1572 տող) պոեմը: Այն սկսել եւ գրել է Ներսես Մոկացին, եւ վերջինիս գիտությամբ, վստահաբար՝ նաեւ խմբագրությամբ, ավարտի է հասցրել Ստեփանոս Շատախեցին: Պոեմի գրության մասին ուշագրավ փաստեր կան Ստեփանոս Շատախեցու հիշատակարանում (էջ 169), ինչպես նաեւ նրա գրածի առանձին տողերում: Դրանցից պարզվում է, որ Ներսես Մոկացին, թույլտվություն խնդրելով Աստվածամոր գերեզմանից, պոեմը գրել է Երուսաղեմում եւ գրել 100 տուն: Իսկ ինքը այն շարունակել է եւ գրել 300 տուն, նախ՝ 250, ապա 50 տուն ընդգրկող մի մաս:

Այդ մասին պոեմի 1385-1388 տողերում կարդում ենք.

*Սիրով քոյին ծնող բանին*
*Շարեալ եդի ընդ նախնի ճառին,*
*Տունս հինգ յիսուն աւելորդին՝*
*Հոգոյն շնորհիւ յարեալ ի նմին (էջ 134):*

Այսքանը՝ ավելացրած 50 տան մասին: Իսկ վերջից երրորդ եւ երկրորդ տները (1561-1568 տողեր) ներկայացնում են Ներսես Մոկացու եւ իր գրածի ընդհանուր պատկերը.

*Այլ այս թըւիս որ յառաջեալ*
*Եւ բան զբան գոլով ծնեալ,*
*Նախ՝ մին հարիւր Ներսէս ոգեալ,*
*Որ պըւէտ Մոկեաց մակաձայնացեալ:*

*Յետ այսմ եւ մեր վստահացեալ՝*
*Բան ի բանից գոլ կըցկցեալ,*
*Երից հարեւրց մակագրեցեալ*
*Համայնն չորիւք բովանդակեալ (էջ 140):*

400 տունը քառատող տներով անում է 1600 տող, բայց այստեղ պակաս է 7 տուն (28 տող), ինչը հետեւանք է ձեռագրերի տարբերության:

Ներսես Մոկացին, ինչպես նշեցինք, Երուսաղեմում եղել է 1608-1609 թթ. եւ իր նեբողը գրել է այդ ժամանակ, իսկ Շատախեցին հավելումը կատարել է ավելի ուշ՝ Լիմի անապատում:

Պոեմը կքննենք ամբողջական ընդգրկումով՝ հաշվի առնելով երկու հեղինակների տարբերությունը, բայց նաեւ պահպանելով երկի միասնությունը՝ որպես հայ միջնադարյան տաղերգության մի նշանակալի արտահայտություն:

Ըստ անվանդության՝ Բարթուղիմեոս առաքյալը Տիրամոր պատկերը բերել է Հայաստան եւ պահել Հոգյաց վանքում: Տիրամոր պատկերը եկել էր փոխարինելու նախաքրիստոնեական շրջանի գերագույն աստվածություններից մեկին՝ Անահիտին:

Պոեմի նյութն, ահա, սուրբ Աստվածածնի մահվան եւ Հոգյաց վանքում պահվող նրա պատկերի հետ կապված զրույցներն են:

Աստվածածնի կերպարը հայ միջնադարյան քնարերգության մեջ պատկերվել է շատերի կողմից, իսկ Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Լամբրոնացու տաղերում հասել է կատարելության:

Բնույթով սա պատմողական պոեմ է՝ հանդիպող քնարական հատվածներով, որոնք փառաբանական-գովասանական բնույթ ունեն:

Ներսես Մոկացին սուրբերի հիշատակն է ոգեկոչում՝

*Որք ընկալան զբանն կենաց՝*
*Մաքուր մաւրէն մեր փրկանաց,*
*Որ ողջ խոկումն է կուսանաց,*
*Չափ եւ քանոն առաքինեաց (էջ 90):*

Աստվածամայրը *«զերկնային լոյսն տեղեաց՝ /Զմէգ մթութեան ի մէնջ եբարձ: Որ եւ թեթեւ ամպաւ չուեաց /Ընդ կենցաղոյս այս ծովընթաց...»*:

Մայրը ողբում է որդու համար. *«Դու համբառնաս ի փառս անճառ Եւ զիս թողաս պանդխտաբար...»*: Տիրոջ համբարձումից 20 տարի անց փառաբանական այսպիսի պատկեր է ներկայացնում, որ գրված է ժողովրդական երգի նմանությամբ.

*Ե՜կ, մերձաւոր, ձմեռն անցեալ,*
*Ահա այգիս մեր ծաղկեցեալ,*
*Յատանելոյ ժամն մերձեալ,*
*Ձայն տատրակի աստ հնչեցեալ (էջ 93):*

Բրաբիոն ծաղիկով զարդարում են Աստվածամոր գլուխը եւ սուրբ Կույս Մարիամի այս աշխարհից փոխվելուն նախորդում եւ հաջորդում է հրաշքը.

*Եւ զի նշանք լիցին հրաշալի*
*Ի պսակէն բրաբիոնի*
*Եւ զաւրութիւնք բժշկութեան*
*Առ ի տեսիլ սքանչելի (էջ 94):*

Աստվածամայրը Ձիթենյաց լեռան վրա երկրպագում է. *«Դու, Տէր, իմ Տէր, Յիսուս Որդի < ...> /Դու խոստացար գալ ի յերկրի /Եւ զիս հանել յերկինս երկնի»*: Երկնքից Հիսուսը ձայնում է. *«Մի՛ երկնչիր, մայր սրբասնեալ, /Ես գամ առ քեզ կառաւք բազմեալ: /Եւ ոչ թողից զծնողդ աւրինեալ <...> /Այլ աւանդեմ զհոգիդ մաքրեալ /Ամբողջ մարմնովդ վեր ամբարձեալ»*:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՊՈՂՈՍ Բ ԳԱՌՆԵՑԻ

## (1418-1430)

*Սկիզբը՝ էջ 3*

Հայերի համար իրոք դժվարին պայմաններ ստեղծվեցին, եւ նրանք փախուստի էին դիմում երկրի անմատչելի վայրերն ու ծերպերը: Այնուհանդերձ, մեծ թվով հայեր գերի տարվեցին Խորասան: Մինչեւ 1430 թ. Պենտեկոստեն, այսինքն՝ հունիսի 4-ը, թաթարներն ավերում էին երկիրը, իսկ նրանց հեռանալուց հետո ՝ Խաչի տոնին, այսինքն՝ սեպտեմբերի 17-ին, Իսքենդերը կրկին պաշարեց Արծկեն: Արծկեի հայ տանուտեր Մուրադը եւ Արճեշի տանուտեր Հովհաննես Փոքոն եւ Գորգի Աղոն եւ մի քանի այլազգիներ բանակցեցին Իսքենդերի հետ, անձնատուր եղան, եւ բնակչությունը չվնասվեց: Մեծոփեցին հիշյալ յոթ տարիները համարում է դառն պատուհասի ժամանակներ: 1431 թվին երկրում ահավոր սով սկսվեց: Ոչ միայն Հայաստանում, այլեւ Ատրպատականում մարդիկ սկսեցին անգամ երեխաներին մորթել եւ ուտել: Միայն Թավրիզի մեջ հազար հոգու կերել էին գաղտնի կամ ակնհայտ: Իսկ գայլերը, վարժվելով լեշեր ուտելուն, սկսեցին հարձակվել կենդանի մարդկանց վրա: Մեծոփեցին, նկարագրելով Հայաստանի հյուսիսային մասերի դեպքերը, օգտվում է Զաքարիա Տեղերցի աբեղայի վկայություններից:

Այդ դժնդակ ժամանակներում, նեղվելով սովից եւ հալածանքներից, որոշ թվով հայեր Բաղեշի, Սասունի եւ Մշո շրջաններում մահմեդականություն ընդունեցին: Այս շրջաններում իրենց թուրք կամ քուրդ համարածների մի մասը նախկին հայերն են, որոնք մահմեդականություն էին ընդունել այդ ժամանակներում: Դա պարզ երեւում է անգամ ցանգաբանությունից եւ մարդկանց դիմագծերից: Թերեւս շատերը միայն առերես էին մահմեդականանում՝ սպասելով լավ ժամանակների, սակայն վիճակը չէր փոխվում, եւ նրանց զավակներն ու թոռներն արդեն վերածվում էին իսկական մահմեդականների:

Սակայն մեծ թիվ էին կազմում նաեւ նրանք, ովքեր պատրաստ էին մեռնել՝ հանուն իրենց հավատի: Նրանց մի մասի անունները, ինչպես նախորդ դարերում, պահպանել է պատմությունը: Նրանցից մեկն էր Հիմար վանեցի կոչված մի կին: Դժվար է ասել՝ դա հատո՞ւկ անուն էր, թե՞ ածական: Նրա ամուսինը սպանվել էր Վանի՝ 1387 թ. կոտորածի ժամանակ, եւ նա ստիպված, իբրեւ խոհարար, ծառայության էր անցել մի քրդի մոտ: Քուրդը, որի կինը նույնպես մեռել էր, կնության առավ նրան, եւ մի տղա եւ մի դուստր ունեցան: Քրդի ազգականները ստիպեցին, որ սա իր կնոջը մահմեդականացնի: Նրանք բավարարված կլինեին, եթե Հիմար վանեցին երեք քար նետեր հայոց եկեղեցու վրա: Նա ենթարկվեց այդ պահանջին, եւ քրդերը խաղաղվեցին: 20 տարի նա ապրեց կեղծ ուրացությամբ, սակայն խիղճը հանգիստ չէր: 1406 թվին նա հեռացավ Մակու, ուր իշխում էր Սուրղաթմիշ անունով մի քրիստոնյա: Նա այստեղ մնաց 10 տարի, բայց այստեղ էլ նրա միտքը պղտորեցին, թե պետք է կեղծուրացությունից հրաժարվի այնտեղ, որտեղ դա տեղի է ունեցել: Նա գալիս է Վան՝ իր քուրդ ամուսնու եւ զավակի մոտ, որոնք նրան թույլ էին տվել գաղտնի դավանելու քրիստոնեությունը: Սակայն ազգականները նորից գլուխ բարձրացրին՝ տեսնելով, որ եկեղեցի է հաճախում: Նրան ստիպեցին, որ մերժի իր քրիստոնյա լինելը, որից այդ կինը հրաժարվեց: Սկսեցին նրան տանջել եւ քարկոծեցին քաղաքի հրապարակում: Իսկ նա այդ ընթացքում գոհունակությամբ կրկնում էր, թե այն քարերը, որ եկեղեցու վրա նետեց, այժմ իր գլխի վրա է ընդունում: Դա տեղի ունեցավ 1418 թվին, թեեւ 1416 թվին դնողներ էլ կան: «Յայսմաւուրք»-ի տվյալներով՝ դա եղել է փետրվարի 3-ին:

Պողոս կաթողիկոսի հովվապետության շրջանում եղան նաեւ այլ նահատակներ: Նրանցից էր Արծկեի հայ իշխաններից Մուրադ-Շահը, որը մի տեսակ թագավոր էր քրիստոնյաների համար, որոնք ապրում էին Վանա լճի շրջանում: Նրան չներեցին, որ նա անօրենների մեջ խաչով եւ Ավետարանով ջուրն օրհնեց: Մահմեդականները, դրա վրա զայրացած եւ դաշնակից ունենալով Զենոն անունով մի մատնիչ հայի, քաղաքապետին ամբաստանեցին՝ նրա այդ արարքի համար: Քաղաքապետն էլ, օգտվելով ամբաստանությունից, նրա դեմ մեղադրանքը փակելու համար՝ ուրացություն առաջարկեց: Հայ իշխանը մերժեց եւ խիստ



կույն բանտարկվեց: Հետո նրան պարսպից կախեցին եւ նետարհաքեցին:

Արծկեցի մեկ այլ տանուտեր՝ Զաքարիա անունով, նույն կերպ ուրացության պարտադրվեց: Մերժում ստանալով՝ նրան եւս կախեցին: Նույն ժամանակներում նահատակվեց Զարիշատ ավանի ձեռնավոր Մկրտիչը: Նրան եւ նրա ընտանիքի ութ անդամներին ողջակիզեցին: Այդ ձեւով վարվեցին Ասպիսնակ գյուղի Հովհաննես ձեռնավորի, ինչպես նաեւ Արիստակես Քաջբերունցու հետ: Կրակի մեջ նրանց խորովեցին գառան նման,- գրում է Մեծոփեցին: Վերջիններիս նահատակությունը եղավ 1420 թվին՝ Ամյուկ բերդի իշխան Փիրալու օրոք:

Հիշյալ ժամանակաշրջանի նահատակների մեջ առավել նշանավոր է Վարդան Բաղիշեցին, որ լճափնյա Դատվան ավանից էր: Նա օրինակելի հավատացյալ էր՝ ամուսնացած, հողատեր: Տեսնելով, թե ինչպես Բաղեշի Շամշ-ադդին ամիրան փործում է քաջալերել ուրացողներին եւ բռնադատել մյուսներին, անձամբ ներկայանում է ամիրային եւ ասում, որ Աստված 72 լեզուներից յուրաքանչյուրին թողել է իր օրենքով, հետեւաբար նա արդյո՞ք Աստծուց բարձր է, որ կամենում է բոլորի օրենքները փոխել: Դրա վրա ահավոր զայրացած ամիրան նրան մի քանի անգամ հարվածում է եւ կարգադրում բանտարկել, ինչը տեղի ունեցավ 1421 թ. հունվարի 1-ին՝ չորեքշաբթի օրը, որը համապատասխանում է Հայոց 870 թվականի նավասարդի 27-ին: Վարդան Բաղիշեցուն ցուրտ ձմռանը մերկ, ոտաբոբիկ ու գլխաբաց բանտ են տանում, երեք օր տանջում են եւ կրկին ներկայացնում ամիրային: Անմեղ նահատակը, նույնիսկ Ղուրանից մեջբերելով Հիսուսին վերաբերող հատվածները, պաշտպանում է իր դավանանքը եւ նույն օրը մահապատժի ենթարկվում սրով, բրով եւ քարերով:

Այս նույն՝ 1421 թվին Խիզանում երկու հաբեշ քահանա է նահատակվում, որոնք ուխտի էին եկել Հայաստանի սրբավայրերը: Նրանք սպանվեցին մահմեդականների կողմից եւ թաղվեցին Բարեձորի վանքում, որը հայտնի է առավելապես Յոթնխորան Սբ Աստվածածին անունով: Երբեմն այն կոչվում է Հաբեշ քահանաների կողմեր:

Այդ ժամանակներում է նահատակվել նաեւ Թովմաս Պուտլիկցի վարդապետը, որի մանրամասները պատմությունը չի պահպանել: Հայտնի է, որ նա եղել է Սիմեոն Ռշտունի վարդապետի աշակերտը: Նրան պարզապես նետահարել են: Պուտլիկ վանքը գտնվում էր Ռշտունիքում, եւ Սիմեոն Ռշտունեցին, հավանաբար, եղել է նրա առաջնորդը:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

# ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԸ

**Այս հոդվածը հեղինակը դեռեւս իր կենդանության օրոք հասցեագրել էր մեր թերթին**

Հին-հին ժամանակներից ի վեր հայ աշխարհիկ ու հոգեւոր առաջնորդները, նույնիսկ աշխատավոր զանգվածները հայրենի երկրի փրկության գործը կապում էին հավատակից հզոր Ռուսաստանի հարավային արշավանքի հետ: Դրա համար էլ այդ փրկության ու պետականության վերականգնման նվիրյալ երիտասարդները ջրի ճամփա էին դարձրել Ռուսաստանը. գնում ծառայության էին մտնում նրա բանակում, ձեռք բերում ռազմական գիտելիքներ, ունակություններ եւ բարձր աստիճաններ՝ հուսալով, թե մի օր էլ այդ բանակի զորագնդերի հետ կիջնեն հարավ, Կովկասը, Անդրկովկասն ու Հայաստանը կփրկեն այլադավան բռնավորների ստրկությունից:

Իսրայել Օրին Պետրոս Մեծից շնորհված գնդապետի աստիճանով եկավ հայրենիք, ոտքի հանեց ազատ ու արժանապատիվ կյանքի ծարավ իր ժողովրդին: Եվ Օրիին էլ ընդօրինակեցին նորերը, մանավանդ նրանցից, որ հնարավորություն ունեին ընկնելու Ռուսաստան կամ էլ նրա հարավային քաղաքներում էին բնակություն հաստատել՝ Ղզլարում, Աստրախանում, Ղրիմում եւ այլուր: Օրիից մեկ-երկու տասնյակ տարիներ հետո այս երիտասարդներից կազմված մի ամբողջ էսկադրոն (մի քանի գումարտակից կազմված հեծյալ զորամաս) ռուսաց բանակի հետ Կասպից ծովի ափերին մարտ էր մղում պարսից դեմ: Եվ, ահա՛, հենց այս էսկադրոնի հետ բարձրացած, նրա խիզախ մարտերը կազմակերպած Աղազար դի Խաչիկը (Նոր Ջուղայի վաճառականի զավակ), առաջինն ազգակիցների մեջ, 1734 թ. Ռուսաց բարձր հրամանատարությունից ստացավ գեներալ-մայորի աստիճան:



*Բարսեղ Բեհբութով*

Ռուսական աղբյուրներում Աղազար դի Խաչիկը կոչվում է նաեւ Լազար Քրիստափորով: Նրա հետ հիշատակվում են նաեւ բարձրաստիճան ու բարձրապաշտոն ուրիշ հայ զինվորականներ, ինչպես Պողոս Պետրոսովը, Ձենենց Իվան Սումբատովը, Այվազ Աբրամովը, Ավան Բաբանովը (նա ինքը՝ Ավան Հարյուրապետը), Ռաֆայել Կուզանենցը եւ այլք, որոնց մեջ քիչ չէին գնդապետները, օրինակ՝ Ձենենցը, Կուզանենցը, Սումբատովը եւ այլք:

Աստրախանում ծնված Դմիտրի Իվանի Ախշարամովը (1792-1837), որ գեներալ-մայոր էր, մասնակցել է ռուս-ֆրանսիական (1806-1807) եւ ռուս-թուրքական (1809-1811) պատերազմներին, ապա եւ 1812-ի Հայրենական պատերազմին եւ 1813-1814 թթ. ռուսական բանակի այլեւայլ արշավանքների, եղել է նաեւ գրչի մարդ՝ պատմաբան, 1826-1837 թթ. կազմել է ռուսական զինվորական օրենքների առաջին հավաքածուն:

Թիֆլիսեցի գեներալ-լեյտենանտ Արշակ Հարությունի Տեր-Ղուկասովը (1819-1881) 1850-1860 թվականներին գլխավորել է ռուսական մի շարք զորամասեր, որոնք հպատակեցնում էին կովկասյան լեռնականներին: Խոշոր հաղթանակներ է կազմակերպել 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմում, որի ավարտից հետո գլխավորել է Ռուսաստանի Անդրկասպյան զորքերը, Կովկասյան 2-րդ կորպուսը, արժանացել Ռուսաստանի եւ օտարերկրյա բարձրագույն շքանշանների:

Արցախցի Վալերիան (Ռոստոմ) Գրիգորի Մադաթովը (1782-1829) գեներալ-լեյտենանտի աստիճանի է հասել՝ մասնակցելով Ռուսաստանի 19-րդ դ. առաջին քառորդում մղած բոլոր մեծ ճակատամարտերին՝ 1812-ի Հայրենական պատերազմում վարելով զորամասի հրամանատարություն: Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու համար խոշոր մարտեր է շահել (1826-ին Շամքորի մոտ երկու հազար զինվորով ջարդեց պարսից տասը հազարանոց զորամասը), ապա նշանակվել Ղարաբաղի կառավարիչ:

Թիֆլիսեցի հետեւակազորի գեներալ Բարսեղ Հովսեփի Բեհբութովը (1791-1858) եռանդուն մասնակցություն է ունեցել Ռուսաստանի կովկասյան, ռուս-թուրքական կռիվներին, 1830-1838-ին եղել Հայկական մարզի կառավարիչ:



*Միքայել Լոռիս-Մելիքով*

Նույն կռիվների մեջ նշանավորվել են նաեւ գեներալ-լեյտենանտ Հակոբ Ալիխազյանը (թիֆլիսեցի), գեներալ-մայոր Բեհբուդ Շելկովնիկյանը (Նուխեցի) եւ ուրիշ շատ հրամանատարներ:

Շուշեցի գեներալ-լեյտենանտ Իվան Դավթի Լազարեւը (1820-1879) անգնահատելի ծառայություններ է ունեցել ռուս-թուրքական պատերազմներում եւ Կովկասի նվաճման գործում (Գունիբում նրան հանձնվեց Շամիլը):

Գնդապետ Եղիազար Լազարյանը (1788-1870) 19-րդ դարի սկզբին գլխավորում էր պարսկահայերի գաղթը, ապա պաշտոնավարեց ցարի թիկնապահ զորամասում:

Լոռու մելիքական տոհմի ժառանգ Միքայել Լոռիս-Մելիքովը (1825-1888) ռուսական բանակի հայ զորավարների շարքում ուներ առանձնահատուկ տեղ ու դեր: Ստացել էր կոմսի տիտղոս, գեներալ ադյուտանտ էր: Խոշոր զորամիավորումներ գլխավորեց թուրքերի դեմ Ղրիմում ու Կովկասի հարավում Ռուսաստանի վարած հաղթական պատերազմներում, վիթխարի ծառայություններ ցուցաբերեց Հյուսիսային Կովկասը Ռուսաստանի տիրապետության տակ առնելու գործում: Ապա ցարական արքունիքում զբաղեցրեց բարձր պաշտոններ՝ ընդհուպ մինչեւ ներքին գործոց մինիստր: Ալեքսանդր Բ-ի հավանությանն էր արժանացել այս խելոք ու համարձակ գործչի պետական բարեփոխումների ծրագիրը:

Հետագա ժամանակներում եւս հայերը սիրով ու պարտքի բարձր գիտակցությամբ ծառայում էին ռուսական բանակում՝ երբեք չկորցնելով այն հույսն ու հավատը, որ Ռուսաստանի՛ց է լինելու հայերի ու Հայաստանի փրկությունը: Դեռ 17-րդ դարի կեսերին Իրանի Սպահան քաղաքի բնակիչ Զաքար Սահրադովին Մոսկվայի դեսպանատանը հարց են տվել. «Ի՞նչն է քեզ ստիպում գործել Ռուսաստանի համար, օգտակար լինել նրան»: Եվ նա պատասխանել է այսպես. «Ջանասեր ծառայության է մղում ո՛չ թե անձնական կամ ուրիշ որեւէ շահ, այլ հավատակցությունը եւ այն հովանավորությունը, որ Ռուսաց միապետն է ցուցաբերում քրիստոնյաների հանդեպ: Իսկ իմ ազգը նրա՞նց մեջ է»:

Այսպես կարող էին պատասխանել բոլոր այն հայերը, որ ծառայում էին Ռուսաստանի բանակում, շարքային զինվորականից մինչեւ զորավարը, նրանք, որ ծառայում էին հավատարմությամբ եւ մանավանդ հավատով, թե դա ծառայություն է նաեւ իրենց հարազատ ժողովրդի՛ն, մայր հայրենիքի՛ն:

*Բագրատ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր*



# ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ

## (Մոտ 1575-1625)

*Սկիզբը՝ էջ 4*

Գումարվում է սուրբերի գունդը, որ առաքյալներն էին՝ ընտրյալ պետերի երջանիկ դասը, եւ փառերգում են Հիսուսին ու Աստվածամորը: Հավաքվում են նաեւ քրիստոնեության գերաստիճան սպասավորները եւ շարունակում Աստվածածին մոր գովքը: Հովհաննես ավետարանիչը սուրբ խաչի փայտի մի կտորի վրա նկարում է Աստվածամոր պատկերը: Առաքյալները խնդրում են Աստվածածին Մարիամին օրհնել նկարակերտ տախտակը, որ իր փոխարեն երկրպագեն: Տիրոջ համբարձումից հետո Տիրամայրն է եղել սուրբ դասի ուրախությունը, իսկ հիմա արդեն կմնա նրա պատկերը:

Այս հատվածները գրված են երկխոսության ձեւով: Իրար հետ խոսում են Աստվածամայրը եւ հոգեւոր առաջնորդները: Տիրամայրն ասում է.

*Այլ միաբան աղաւթեցէք,*
*Անխռով սիրով յուղարկեցէք,*
*Խաղաղութեամբ զիս հասուցէք,*
*Նաւահանգիստն զիս մուծեցէք*
*(էջ 101):*

Պողոսը՝ *«հնչող փողն Յիսուսի»*, պատասխանում է՝ մենք ենք Տիրոջ *«հրովարտակն»*, քո ծնած Որդու *«հնչող փողը»*, թո՛ղ մեզ քո պատկերը: Պատկերը հանում են, Քրիստոսը հրեշտակապետերի ուղեկցությամբ իջնում է երկիր եւ *«Իւրով ձեռաւքն աստուածային /Տեառնագրեաց զձեւ պատկերին»*: Մահը վերածվում է տոնի: Աստվածածինը հեռանում է մարմնով, բայց մնում է իր պատկերով: Մահերգի փոխարեն հնչում է ցնծերգ.

*Իսկ առաքեալքն նստէին,*
*Շուրջ զնովաւ պար առնէին,*
*Ներբողինիւ նուագէին,*
*Գերապատիւ մաւրն երգէին*
*(էջ 105):*

Ապա՝ այդ ցնծերգը Տիրամոր փոխման պահին դառնում է ողբերգ, ողբերգը՝ օրհներգ, որ երգասացությամբ հնչեցնում են Պետրոս առաքյալը, Հովհաննես ավետարանիչը, Միքայել հրեշտակապետը, սերովբեները, քերովբեները եւ մյուս սուրբերն ու նրանց աշակերտները: Ե՛վ ողբը, ե՛ւ օրհնությունը բնույթով ներբող են, որ *«սխրահամբավ»* փառավորում են Աստվածամորը.

*Աստուածաբան եղեալ նմին*
*Ներբողինիւ հիանալին,*
*Սքանչացեալ ի խորհրդին*
*Պատմաբաններ ի հանդիսին:*

*<…> Եւ յոյժ եղեւ նոցա խնդութիւն*
*Առաքելոցն ամենեսին,*
*Վասն սրբոյ կենդանագրին*
*Եւ պատկերի Աստուածածնին*
*(էջ 109-111):*

Դագաղի մեջ ամփոփում են աստվածաբնակ Կույսի մարմինը: Երգով, խունկի բուրվառով, հրեշտակների պարով ու օրհներգությամբ, անհավատներին դարձի բերելով՝ նրան ուղեկցում են գերեզման: Բայց կան նաեւ այդ սգերթը խանգարողներ, որոնք հրեաների «խուժադուժ» ազգից էին.

*Կայիափայ 'ւ ազգն հրէին*
*Վիշտս եւ վտանգս նմա տային,*
*Ձի ոչ թողուլ յոյժ ջանային*
*Գնալ ի սուրբ գերեզմանին (էջ 116):*

Աստվածամորն ամփոփում են Գեթսեմանիի ձորում: Իսկ նրա պատկերը բաժին է հասնում Բարթուղիմեոսին. /*«Նշխար փայտին, որ շնորհեցաւ՝ /Բարդուղիմայ վիճակեցաւ»*: Ահա նա էլ Աստվածածնի պատկերը բերում է Հայաստան՝ *«յոր Սանատրուկ զԹադէ սպանեալ»*: Նա անցնում է Խորասանով. *«Ուր եւ շիջոյց զկրակարանն /Եւ լոյս կանգնեաց հրոյն փոխան»*: Այնուհետեւ նա գալիս է *«Ի Գողթ գաւառն»*, շատերին դարձի բերում, հետո դիմում Անձեւացյաց գավառ, ուր Անահիտի սրբատեղին էր.

*Առ ի համբաւ քարի միոջ,*
*Յոր էր աղուեսն ամրացեալ յորջ,*
*Ընդ Անահտայ բնակեր տիկնոջ՝*
*Մարդախոշոշ կռանագոչ:*
*Քանզի փայլակն ի վայր անկեալ,*
*Ի Դարբնաց քրայս արկեալ,*
*Չղեղն, որ կազմեր ախտիւ*
*խառնեալ,*
*Յուռութ ուլունս մակարդացեալ*
*(էջ 121):*

Այստեղ՝ այս Դարբնաքարում, ապրում էին հին վիշապները, այսինքն՝ իշխում էր հեթանոսությունը: Դիցամայրը խորտակում է նախկին սրբությունները, հալածում դեւերին, իսկ Բարթուղիմեոսը *«Հիմն արկանէ անդ հաւատոյ»*: Ահա այդտեղ էլ Բարթուղիմեոսը սեփական ձեռքերով փոքր եկեղեցի է կառուցում եւ անվանում Աստվածածին, իսկ *«Ձտեղին Հոգւոց վանք անուանէ»*, որին եւ պահապան է կարգում հոգեւոր քույրերին: Շարունակվում է քրիստոնեական քարոզչությունը՝ ավելացնելով հավատացյալների թիվը, մինչեւ Գրիգոր Լուսավորչի առաքելությունը: Այսպես սուրբ Աստվածածնի պատկերը *«Է միջնորդ մեզ առ Որդին»*:

Պոեմի վերջնամասն ամբողջությամբ Աստվածամոր փառաբանությունն է: Բանաստեղծն այսպես է դիմում նրան. *«Ով սրբուհի կոյս Մարիամ /Վիմածին լեառն եւ սուրբ խորան <...> /Լեր եւ միջնորդ ինձ գթական /Առ միածինդ անմահ արքայն»*: Այստեղից՝ 1325-րդ տողից սկսած մինչեւ 1388-րդ տողը, տների առաջին տառերով հոդում է *«Ստեփանոս մեղաւորս»*, որտեղ նա հոգու փրկություն է աղերսում. *«Ո՛վ Տիրամայր անապական /Առիթ կենաց ինձ փրկութեան...»*: Այս հատվածի ավարտից հետո՝ 1393-րդ տողից մինչեւ 1533-րդը, դարձյալ տների առաջին տառերով հայոց այբուբենի ծայրակապն է՝ Այբ-ից Քե: Վերը հիշված առաջին եւ այս՝ երկրորդ ծայրակապերի միջեւ կա մի տուն, որն այս է.

*Այժմ դարձեալ ընդ նոյն շաւղին*
*Երգս երգեցից մաւրդ անեղին,*
*Քեզ պատմաբանս ըստ այբուբենին,*
*Ինձ ողբ եւ ձայնս լալագին (էջ 134):*

Այս հատվածը եւս փառաբանություն է: Վերստին հեղինակը դիմում է սուրբ Կույսին՝ խնդրելով. *«Յան ի հոգոյս զաղտ զազրալի, /Զփտեալս մեղաւք դառնագունի»*: Այբուբենի ծայրակապին հաջորդում է եւս մի ծայրակապ՝ *«Ողորմեայ»* (1537-1564 տողեր), դարձյալ գովք, որ հեղինակը ձեւակերպում է այսպես. *«Ղեկաւք դրուատ պատշաճավոր /Ով ոք գովէ զքեզ յանկաւոր»*:

**Ժողովրդական մոտիվների մշակման տեսակետից** առանձնանում են հատկապես *«Վիճաբանութիւն երկնի եւ երկրի»* եւ *«Ողբ վասն առմանն Երուսաղեմի»* տաղերը:

*«Վիճաբանություն երկնի եւ երկրի»* տաղը ակնհայտորեն ունի ժողովրդական ծագում. ժամանակին այն երգել են մոկացիք (այս մասին վկայում է Գ. Հովսեփյանը 1898-ին, տե՛ս **Ներսես Մոկացի**, Բանաստեղծություններ, էջ 161):

Հետազոտողներից ոմանք այն նույնիսկ համարել են անանուն, ժողովրդական:

Այս տաղը մի գեղեցիկ երկխոսություն է երկնքի եւ երկրի միջեւ: Դիմառնությամբ խոսում են երկինքն ու երկիրը եւ փորձում մեկը մյուսին ապացուցել իրենց առավելությունը:

*Շարունակությունը՝ էջ 6*

## Կից սենյակում

# ՄԻ՛ ՇՆԱՑԻՐ

## Պատվիրան յոթերորդ

Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գր. Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

> *«Աստված պիտի դատի շնացողներին եւ պոռնիկնե-րին...»* Եբր. ԺԳ 4)

**- Տե՛ր հայր, տասնաբանյայի յոթերորդ պատվիրանը չշնանալն է՝ մաքուր պահելով մարմինը պոռնկական ախտից եւ նրա բոլոր տարատեսակներից: Ինչո՞ւ է շնությունն այդքան ծանրագույն մեղք համարվում:**

- Շնության դեմ օրինական արգելք դրվել է դեռ մարդկության արշալույսին: Աստված Ադամի համար ստեղծեց Եվային. նրանց ընտանիքը ծաղկեց, բազմացավ, սակայն հետագայում առաջ եկավ պղծությունը: Աստված մարդուն սեռական կարողություն է տվել. դա Աստծու պարգեւն է մարդուն, որը պիտի ծառայի ընտանիքի ձեւավորմանն ու կապի հաստատմանը: Քրիստոսը վերջ տվեց բազմակնությանը, Իր օրինակով ցույց տվեց բացարձակ սրբության ճանապարհը, եւ շատերը հետեւեցին Նրան: Քրիստոսի հաստատած այդ սրբության հիմքը քրիստոնյա ազգերի մեջ արմատացավ՝ ձեւավորելով ընտանեկան համակարգը: Օրենքով էլ սահմանված է, որ յուրաքանչյուր մարդ պիտի ունենա մեկ կին: Շատերը շահարկում են այս պատվիրանը, իրենց համար կեղծ օրենքներ ստեղծում՝ առաջնորդվելով «ինչ բնական է՝ բարոյական է» սկզբունքով: Սակայն Ավետարանում հստակ է ասվում, որ ընտանիքից դուրս ծածուկ կապեր ունենալը միանշանակ շնություն է, մեծագույն մեղք եւ պղծություն:




**- Մեր Տեր Հիսուս Քրիստոսը շնություն է անվանում ո՛չ միայն այս ախտի մարմնավոր իրագործումը, այլեւ մտքով ցանկանալն իսկ, որը Եկեղեցու հայրերը հոգեւոր շնություն են անվանում...**

- Հիշենք, որ Տերը Հին Ուխտի շատ օրենքներ խստացրեց. «Ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջ նայում է՝ նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում: Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանի՛ր այն եւ դե՛ն գցիր քեզնից. որովհետե քեզ համար լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, եւ քո ամբողջ մարմինը չընկնի գեհեն...» (Մատթ. Ե 28-29): Սրանով Քրիստոսը չի դրդում մարդուն անդամահատման, այլ հասկացնում է մեղքի ծանրությունը, քանի որ շնության մեղքը նախ ծնվում է մարդու մտքում եւ, չհանդիպելով կամքի դիմադրությանը, վերաճում է արդեն մարմնավոր շնության: Այդժամ մարդը դառնում է անօգնական ստրուկ:

**- Տե՛ր հայր, հայտնի է, որ բոլոր զգայարանները կառավարվում են խորհուրդների միջոցով: Ինչպե՞ս է հնարավոր միտքն ու խորհուրդները մշտապես մաքուր պահել:**

- Ս. Գր. Նարեկացին եւ Եկեղեցու մյուս հայրերը նշում են, որ մարդու հոգին արարչագործ հրամանով եւ կարգադրությամբ եռամասնյա է՝ ունի խոսք, ցասում եւ ցանկություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ առաքինությունը: Բանականի առաքինությունը խոհականությունն է, ցասմնականինը՝ արիությունը, իսկ ցանկականինը՝ ողջախոհությունը: Բանականն իշխան եւ հրամանատար է ցասմնականի եւ ցանկականի վրա: Ցասմնականը կառավարվում է բանականից, եւ ինքն իշխում է ցանկականի վրա: Ցանկականն էլ կառավարվում է ցասմնականից: Երբ խախտվում է այս բարվոք կարգավորությունը, երբ ցանկականն է իշխում բանականի եւ ցասմնականի վրա, մարդն ընկնում է շնության եւ մեծամեծ այլ մեղքերի մեջ: Ս. Պողոս առաքյալն ասում է. «Մարմնի գործերը հայտնի են, այսինքն՝ շնություն, պոռնկություն, վավաշոտություն, անառակություններ... Նրանք, որ այսպիսի բաներ են գործում, Աստծու արքայությունը չեն ժառանգելու» (Գաղ. Ե 19-21):

**- Անանիա Նարեկացին ասում է, որ աղտեղի խորհուրդների պատճառ է եւ այն, որ առավել զբաղվում են երկրավոր հոգսերով, ծուլանում աղոթքից եւ աշխատասիրությունից:**

- Անշուշտ, այդժամ չարն աղտեղի խորհուրդներ է ծնում մեր մտքում: Տեղին է հիշել մեր Տիրոջ Խոսքը պիղծ ոգու վերադարձի մասին (տե՛ս Մատթ. ԺԲ 43-45): Պիղծ ոգին դուրս է գալիս մարդուց, շրջում է անջրդի վայրերում եւ հանգիստ չի գտնում: Եվ երբ վերադառնում է, գտնում է «իր տունը» դատարկ, մաքրված ու կարգի բերված: Եթե մկրտված, քրիստոնյա մարդու սիրտը դատարկվում է Աստծու բնակությունից, նա չի ապրում հոգեւոր կյանքով, ծույլ է, Աստծու Խոսքից հեռու, ապա պիղծ ոգիներն են բնակություն հաստատում նրա սրտում: Անշուշտ, պետք է աղոթել, Աստծու Խոսքն ընթերցել, սբ պատարագին մասնակցել, սբ Հաղորդությամբ մերձենալ Աստծուն, ինչպես նաեւ ողորմության գործեր գործել, որպեսզի սատանան մեզ անգործ չգտնի եւ մեղքերի մեջ ներքաշի:

**- «Չգիտե՞ք, թե ձեր մարմինները տաճար են Սբ Հոգու, որ ձեր մեջ է, եւ որն ստացել եք Աստծուց, եւ դուք ձեր տերը չեք, քանզի մե՛ծ գնով գնվեցիք: Փառավորեցե՛ք Աստծուն ձեր մարմինների մեջ»,- ասում է առաքյալը (Ա Կորնթ. Զ 19-20): Փաստորեն, շնության մեջ հայտնված մարդիկ պղծում են Սբ Հոգու տաճար իրենց մարմինները, նույնն է, թե անարգում են Աստծուն: Այո՞, տե՛ր հայր:**

- Մարդն ստեղծված է Աստծու պատկերով եւ նմանությամբ, ցավոք, մկրտված մարդիկ չեն գիտակցում, որ իրենք Սբ Հոգու տաճար են, քանզի վերստին ծնվել են մկրտության սուրբ ավազանից, ստացել Սբ Հոգու շնորհները, սրբալույս մյուռոնով կնքվել են իրենց զգայարանները, ուստի իրենք այլեւս Աստծու զավակներն են, բնակարան եւ տաճար Աստծու: Ուրեմն երբ շնանում են, ապականում իրենց մարմինները, անարգում են Աստծուն: Տեր Աստված մեր մաքրությունն է ցանկանում: Հիշենք, թե ինչպես Տերը մաքրեց տաճարն առեւտրականներից եւ լումայափոխներից (տե՛ս Ղուկ. ԺԹ 45-48): Յուրաքանչյուր մարդ, ով շնություն է գործում, դաշինք է կնքում սատանայի հետ՝ պղծելով Սբ Հոգու տաճար իր մարմինը:

**- Այս ախտը խարխլում է ընտանիքի հիմքերը...**

- Ցավոք, այդպես է: Կեղծ չափանիշ կա մեզանում տարածված, որի համաձայն՝ տղամարդուն կարելի է շնանալ, կնոջը՝ ո՛չ: Մինչդեռ, տղամարդ լինի թե կին, արտամուսնական կապը շնություն է, պղծություն: Առաքյալն ասում է, որ ամուսնական անկողինը սուրբ է, եւ Աստված պիտի դատի շնացողներին եւ պոռնիկներին (տե՛ս Եբր. ԺԳ 4): Մեր օրերում շատերի համար շնության պղծությունը կյանքի նպատակ է դարձել:

*Շարունակությունը՝ էջ 8*



*Սկիզբը՝ էջ 5*

# ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ

## (Մոտ 1575-1625)

Երկինքն ասում է, որ աստղերի, արեւի, լուսնի պայծառությունն իրենն է: Դրան ի պատասխան՝ երկիրն ասում է. *«Վեցհազարագոյն ծաղկունքն՝ /Ամէնն ի՛մ կողեն կու լինին»*: Երկինքն ասում է. իմ ցողը քեզանից կտրեմ՝ ծաղիկներն ինչո՞վ կզարդարվեն: Երկիրը պատասխանում է.

*Դու ցաւղն ի ծովէն կառնուս,*
*Ծովուն ակն յիսնէ՛ կու լինի.*
*Ձիմ ակն որ ի յիս քաշեմ,*
*Նայ քո ցաւղն ուստի՞ց կու լինի*
(էջ 98):

Երկինքը սպառնում է բարկ արեւով ծաղիկները չորացնել, երկիրը պատասխանում է՝ ես անդունդից ջուր կհանեմ: Երկինքը վախեցնում է կարկուտ ու կայծակով, երկիրը պատասխանում է, որ այնքան ձոր ու առու ունի, որ այդ ամենն իր մեջ կպարտակի: Երկինքը հպարտանում է իր սուրբ առաքյալներով ու մարգարեներով: Երկիրն ասում է, որ քո յոթ տակ երկինքը վայր է թափվելու. *«Եւ քո արարիչն Աստուած, /Աթոռով յաշխարհս տի իջնի. /Դատաստան գետին տի լինի»*: Սրանից հետո երկինքը խոնարհությամբ ասում է.

*Ապա ցածրացաւ երկինքն*
*Ու գլուխ եդիր ի գետնի.*
*- Բան մ՛երկու ցանցատ արի,*
*Ձան ի քո սիրտն մի՛ տանիր.*

*Դու հիմն ես եկեղեցւոյ,*
*Գերեզման սուրբ վարդապետի.*
*Դու խունկ ես բուրվառ ի լի.*
*Աւրենք քո վերայ հաստատի* (էջ 42):

Երկրի ուժը խոնարհեցնում է երկնքին: Այս ոգով բանաստեղծը խոսքն ուղղում է երկրայիններին, ասում. *«Մանկո՛ւնք»*,- շարունակում. *«Դուք այլ ցածցէ՛ք, մանկտի՛ք /Ու գլուխ դրէք ի գետնի. /Քան զերկինքն ի՞նչ բարձր կայ, /Որ գլուխ եդիր ի գետնի. /Այսաւր վրան կու քալենք, /Վաղն մտնունք ներքեւ գետնի»*:

Վերինը խոնարհվում է, բարձրը՝ կռանում. սա քրիստոնեության ոգին է, որ նաեւ նշանակում է՝ ինչքան խոնարհ, այնքան բարձր: Նաեւ՝ երկինքը, երկնային Տերը երկրում է, որ կերպարանք առավ Հիսուս Քրիստոսի երեւույթով:

Եվ ապա՝ դեռեւս հունական դիցաբանությունից է հայտնի, որ երկիրը կին է՝ ստեղծող, երկինքը՝ երկնակամարը՝ տղամարդ, որ իր գրկի մեջ պահում է երկրի գունդը: Սա՛ էլ իր խորհրդանշաններով է հուշում՝ խոնարհում ստեղծողին, ինչն, ի վերջո, երկու սկիզբների միաձուլումն է:

Կա նաեւ հոգու եւ մարմնի խորհրդանշանը, երկիրը՝ մարմին, երկինքը՝ հոգի, ինչն այս դեպքում եւս տանում է դեպի միավորում:

*«Ողբ վասն առման Երուսաղէմի»* (396 տող) գործի կապակցությամբ ձեռագրերից մեկում պահպանվել է այսպիսի տեղեկություն. *«Այս ողբոց բանն Երուսաղէմի վաղուց հետէ շինեալ էր, բայց գեղջուկ բառի էր. ապա՝ Աստուած լուսաւորէ զՆերսէս վարդապետի ծնողաց հոգին, որ մեր աղաչանացն լսեց եւ նոր շարադրեաց, համեղացոյց զբանս եւ յինքենէ այլ ասաց ի վերայ»* (էջ 168): Այսինքն՝ Մոկացին ժողովրդական պատումը միաբանների խնդրանքով դարձրել է գրական: Շարունակությունից պարզ է դառնում, որ այն գրել է 1622 թ. Լիմի անապատում:

Հիշենք, որ Մոկացին մինչ այդ (1608-1609 թթ.) եղել էր Երուսաղեմում, ինչն էլ կարող էր ազդակ հանդիսանալ այն գրելու համար:

Հայտնի է, որ պատմական այս դեպքի մասին վկայություններ են թողել նաեւ մատենագիրներ Վարդան Վարդապետը, Սամուել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Սմբատ Սպարապետը եւ ուրիշներ, որոնց Մոկացին, բնականաբար, պետք է տեղյակ լիներ: Խաչակրաց ժամանակների այս պատմությունն ապրում էր ժողովրդի եւ հոգեւոր դասի ներկայացուցիչների մեջ, եւ թուրքական բռնաճնշումների նոր ժամանակներում կարիք էր զգացվում նորոգելու անցած ժամանակների հիշողությունը՝ ուժեղացնելու համար դիմադրության ոգին: Անցյալն ու ներկան շատ նման են իրար. *«Յորժամ ի թուրքն դիմեցին /Խաչն յաջմէ կանգնէր նոցին...»*,- գրում է բանաստեղծը:

Սա ըստ էության պատմական երկ է, որի նյութը Երուսաղեմի 1187-1189 թթ. դեպքերն են, երբ քրիստոնեության այդ կենտրոնը գրավվեց մահմեդականների կողմից: Այս իրողությունը դեպքերի անմիջական տպավորությամբ ողբի է վերածել նաեւ Գրիգոր Տղան՝ գրության ձեւով հետեւելով Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմին (դիմառնություն, Երուսաղեմը որպես որդեկորույս մայր, ողբ):

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՕՁՈՒՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ



Պատմական Գուգարաց նահանգի Տաշիր գավառի Օձուն գյուղի պատմությունը գալիս է դեռ վաղ ժամանակներից: Այստեղ՝ ձորեզրին, արդեն խոնարհվել է Ծիրանավոր-Ծաղկավանք կոչվող միանավ բազիլիկ եկեղեցին՝ որպես վկա վայրի 4-րդ դարում ծաղկող քրիստոնյա արվեստի, սակայն կանգուն է մյուս՝ Սբ Աստվածածին կամ Խաչգունդ եկեղեցին:

Ժողովրդական զրույցն ասում է, թե Թովմաս առաքյալն այցելել է Օձուն եւ իր հետ բերելով Քրիստոսի խանձարուրը՝ թաղել այն ներկայիս եկեղեցու խորանի տակ: Առաջին քրիստոնյաների կողմից այստեղ վառած կրակը 21 դար շարունակ հուրհրում է եւ իր փրկարար լույսը սփռում Լոռվա սարերից:

Եկեղեցին ունի գմբեթավոր եռանավ բազիլիկի հորինվածք (20,7 x 31,6 մ արտաքին չափերով): Աղոթասրահը երեք զույգ սյուներով բաժանվում է երեք նավի, որոնցից միջինը երեք անգամ լայն է կողայիններից: Եկեղեցին հս., հվ. եւ արմ. կողմերից եզերված է բաց սրահներով, որոնք մի ժամանակ ծառայել են է՛ւ երախայից պատարագի համար, է՛ւ որպես տապանատուն. ըստ այդմ էլ՝ արեւելյան հատվածն ունի առավել ձգվածություն աղոթասրահի համեմատ: Կիսաշրջանաձեւ խորանի երկու կողքերին կան երկհարկ ավանդատներ, որոնց վերին հարկերը ծառայել են որպես գրապահոցներ:

Կառուցվածքային վերոնշյալ տարրերը բնորոշ են 4-5-րդ դարերում կառուցված եկեղեցիներին (Երերույք, Դվին, Տեկոր), սակայն իր գմբեթային կառուցվածքով, որը հիրավի հայ ճարտարապետական մտքի ամենափայլուն դրսեւորումներից է, Օձունի գեղաշեն եկեղեցին նման է 7-րդ դարի եկեղեցիներին (Մրեն, Գայանե): Ըստ այդմ, իր ճարտարապետական լուծումներով այն միջանկյալ օղակ է մի կողմից եռանավ բազիլիկ, մյուս կողմից բազիլիկ գմբեթավոր եկեղեցիների միջեւ, եւ ուսումնասիրողների մեծ մասի կողմից թվագրվում է 6-րդ դար: Ըստ այլ կարծիքների՝ 4-րդ դարում այստեղ կառուցվել է միանավ բազիլիկ եկեղեցի, որը 6-րդ դարում վերածվել է եռանավ բազիլիկ գմբեթավոր եկեղեցու: Այնուհանդերձ, եկեղեցու հորինվածքը կարեւոր նշանակություն ունի վաղմիջնադարյան եռանավ բազիլիկներից գմբեթավորին անցնելու ընթացքի բացահայտման համար:

Հայ պատմագրության մեջ եկեղեցու կառուցումը վերագրվել է Հովհաննես Գ Օձնեցի Իմաստասեր հայրապետին (717-728): «Շինում է եւ եկեղեցի մեծ Օձուն գիւղում, որը մոտ է Լոռի քաղաքին»,- գրում է պատմիչը (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 1982, 393):

Սակայն, ինչպես վերը նշեցինք, եկեղեցին կառուցվել է 6-րդ դարում, իսկ Հովհան Օձնեցու կողմից այն հավանաբար ենթարկվել է վերանորոգման: Դարերի ընթացքում բազմաբնույթ աղետներից կիսաքանդ դարձած եկեղեցին նորից վերակառուցվել է 1888-ին, որի մասին է վկայում հյուսիսարեւելյան գմբեթակիր սյան արձանագրությունը. հետաքրքրական է, որ վիմագրում եւս եկեղեցու կառուցումը սխալմամբ վերագրվում է Հովհան Օձնեցի հայրապետին. «Յամի Տեառն 1888 յամսեան հոկտեմբերի մեք Զաքարիա եւ Բաղդասար Աբովեանց վերանորոգեցանք սոյն չքնաղաշէն Խաչգունտ կոչեցեալ եկեղեցիս գեղջս Օձնոյ հայրենեաց մերոց արդեամբք մերով, ըստ Աստուածահաճոյ փափագանաց եւ պատուիրանի բարեխնամ եւ գթառատ մօրն մերոյ Եղիսաբեթի ի յիշատակ նորա, հօրն մերոյ Կարապետի եւ եղբօրն Գէորգայ հանգուցելոց ի Տէր: Եկեղեցիս այս կառուցեալ է յամի Տեառն 735 ի հայրապետէն Տեառն Օհաննոյ Օձնեցւոյ Իմաստասիրէ» (տե՛ս Շախկյան Գ., Օձունի եկեղեցին, Ե., 1983: Քրիստոնյա Հայաստան հանրագիտ., Օձունի Սբ Աստվածածին եկեղեցի, Հասրաթյան Մ., Ե., 2002):



Օձունի եկեղեցին հիացնում է ոչ միայն իր ճարտարապետական վեհասքանչությամբ, դարեր ի վեր կանգուն իր երկնասլաց գմբեթով, այլեւ պատերը զարդարող վաղքրիստոնեական արվեստի մի շարք արժեքավոր պատկերաքանդակներով:

Արեւելյան ճակատի կենտրոնական լուսամուտի պսակի գագաթին՝ արմավենու ոճավորված տերեւների մեջ, պատկերված է Քրիստոսը՝ ձախ ձեռքով Սուրբ Գիրքը բռնած, որի երկու էջերին Հովհաննեսի Ավետարանի առաջին խոսքերն են. «Ի սկզբանէ էր Բանն: Եւ Բանն էր առ Աստուած: Եւ Աստուած էր Բանն»: Բավականին յուրօրինակ է արեւմտյան կողմի շքամուտքը երեք կողմերից եզերող զարդագոտին, որը ներկայացնում է տարբեր ծառերի տերեւներ եւ անհայտ մի պտուղ՝ խորհրդանշելով կենաց ծառի պտուղը: Հարավային ճակատի լուսամուտից վեր մի հարուստ պատկերքանդակ է՝ Տիրամայրը՝ երկու կողմերում սավառնող հրեշտակներով: Բացի նշյալներից, այլ պատկերաքանդակներ եւս կան. ցավոք, բոլորն էլ մեզ են հասել կա՛մ ամբողջովին, կա՛մ մասամբ դիտավորյալ կերպով եղծված վիճակում:

Եկեղեցու արտաքին հատվածից ոչ պակաս ներքնամասը նույնպես աչքի է ընկնում բավականին ինքնատիպ պատկերաքանդակներով: Մկրտության ավազանի խորշի մեջ Տիրամայրն է՝ Մանկան հետ: Մույթերին եւ պատերին կան հավասարաթեւ խաչեր՝ առնված շրջանակի մեջ՝ հենված ժապավեններով պսակված ձողին: Է՛վ Տիրամոր, է՛ւ խաչի նմանատիպ պատկերաքանդակները բնորոշ են 4-րդ դարի հայ արվեստին: Նրանց տեղադրվածությունից, եզրերի հատված լինելուց պարզ է, որ նախապես այլ տեղ են եղել եւ հետո միայն, հավանաբար եկեղեցու կառուցման ժամանակ, տեղադրվել (տե՛ս Շախկյան Գ., Օձունի եկեղեցին, Ե., 1983):

Եկեղեցուց հյուսիս-արեւելք՝ աստիճանաձեւ պատվանդանի վրա, տեղադրված է մոտ 4 մ բարձրությամբ երկու քառակող սյուն՝ քանդակազարդ նիստերով: Այս կոթողը (5-6-րդ դդ.) վաղքրիստոնեական արվեստի՝ մեզ հասած ամենակարեւոր հուշարձաններից է, որի վրա քանդակված են ավետարանական տեքստերին եւ Հայաստանում քրիստոնեության տարածմանն ու հաստատմանն անմիջականորեն առնչվող պատկերներ (Ազարյան Լ., Վաղմիջնադարյան հայկական քանդակը, Ե., 1975: Քրիստոնյա Հայաստան հանրագիտ., Օձունի Սբ Աստվածածին եկեղեցի, Հասրաթյան Մ., Ե., 2002):

Երկար ընդմիջումից հետո՝ արդեն երեք տարի է, Օձունի եկեղեցին ունի հոգեւոր հովիվ՝ տեր Վրթանես քհն. Բաղալյանը: Տեր հոր ջանքերի շնորհիվ այսօր թե՛ Օձունի, թե՛ շրջակա գյուղերի բնակիչները եւ թե՛ այցելող ուխտավորները հաղորդակից են դառնում հոգեւոր-մշակութային այս արժեքներին, ստանում հոգեւոր սնունդ եւ հինավուրց եկեղեցում վառվող կենսատու լույսը պահում իրենց հոգիներում:

*Լուսինե ԹՈՒՄԱՆՅԱՆ*

---

## ՏԻԽՈՆ ԶԱԴՈՆՍԿԻ

# ՄԱՐՄԻՆ ԵՎ ՀՈԳԻ

*Սկիզբը՝ էջ 3*

Մարմնավոր մարդը չի հանդուրժում իր արհամարհված լինելը, իսկ հոգեւոր մարդը դա հաճույքով է ընդունում:

Մարմնավոր մարդը պարսավողին պարսավում է, նախատողին նախատում, չարախոսողին չարախոսում, ատողին ատում, իսկ հոգեւոր մարդուն, երբ պարսավում են, նա մխիթարվում է, երբ հալածում են, դիմանում է, նա անիծողին օրհնում է, բարին գործում իրեն ատողներին:

Մարմնավոր մարդը չի սիրում անգամ իր մերձավորներին, իսկ հոգեւոր մարդն իր թշնամիներին անգամ սեր չի խնայում:

Մարմնավոր մարդը հիշաչար է եւ փոքրիկ վիրավորանքի դեպքում նույնիսկ հատուցում է փնտրում, իսկ հոգեւոր մարդն անգամ խլված կյանքի համար աղոթում է. «Տե՛ր, սա մեղք մի՛ համարիր դրանց» (Գործք Է 60):

Մարմնավոր մարդը նենգորեն, ինքնասիրությունը շոյելով եւ խորամանկորեն է մշտապես ամենքին ներկայանում, իսկ հոգեւոր մարդը՝ մշտապես պարզամտորեն:

Մարմնավոր մարդն ուրիշներին թալանում եւ գողանում է, իսկ հոգեւոր մարդը՝ մշտապես իր ունեցածից է բաժին հանում կարիքավորներին:

Մարմնավոր մարդն անբարիշտ է, իսկ հոգեւոր մարդն աշխարհին ատողների հետ էլ է հաշտությամբ ապրում:

Մարմնավոր մարդն իր հակվածությամբ եւ կրքերով հետեւում է անմաքուրին, իսկ հոգեւոր մարդը՝ ազնվությանն ու ողջախոհությանը:

Մարմնավոր մարդն իր խելքն ու միտքը ծառայեցնում է միշտ կա՛մ իր շահին եւ կա՛մ մերձավորին սննկացնելուն, իսկ հոգեւոր մարդն իր ողջ կարողությունը ներդնում է հանուն իր եղբայրների: Այդ իսկ պատճառով էլ մարմնավոր մարդը հանրության համար վտանգավոր է, իսկ հոգեւոր մարդը՝ օգտակար:

Մարմնավոր մարդն ուզածդ մեղքը ոչինչ է համարում, իսկ հոգեւոր մարդը բոլոր մեղքերից, նույնիսկ ամենափոքրից խուսափում է, ինչպես կփախչեր օձից:

Մարմնավոր մարդն իր ողջ հույսը դնում է փառքի, հարստության, իր ուժերի, իր հովանավորների վրա, իսկ հոգեւոր մարդը՝ Բարձրյալի օգնության եւ իր Արարչի բարեգութ նախախնամության վրա:

Մարմնավոր մարդն ամենից շատ զգուշանում է փառքը, հարստությունը կորցնելուց, վտարված լինելուց, իսկ հոգեւոր մարդն այդ ամենին նայում է մեծահոգաբար:

Մարմնավոր մարդը չի կամենում դրանցից բաժանվել, իսկ հոգեւոր մարդն ուրախությամբ է փորձում արձակել մարմնավոր կապերը:

### Մարմնավոր եւ հոգեւոր մարդկանց վախճանը

Մարմնավոր մարդու համար մահը սարսափելի է («Մեղավորի մահը չարաչար է»,- ասում է սաղմոսագիրը (Սաղմ. ԼԳ 22), իսկ հոգեւորինը՝ խաղաղաշունչ:

Մարմնավորն իր ժամանակավոր մահով մահանում է հավիտենապես: Մարմնավոր խորհրդածությունների էությունը մահ է,- ասում է Մատթեոս առաքյալը: Իսկ հոգեւորն այդ մահվան միջոցով հասնում է հավիտենական կյանքի, քանզի հոգեւորի խորհրդածությունները կյանք ու խաղաղություն են,- հավելում է նույն առաքյալը:

### Մարմնավոր օրենքի եւ կամ մարմնականի դեմ հաղթանակ տանելիս անհրաժեշտ է

Առաջին. Աստծո օգնականությունը, առանց որի հնարավոր չէ բարին կատարել: «Առանց Ինձ ոչինչ անել չեք կարող»,- ասում է Քրիստոսն առաքյալներին: Աստծո օգնությունը խնդրվում է անկեղծ, հաճախակի եւ խոնարհամիտ աղոթքով: «Խնդրեցե՛ք Աստծուց, եւ Նա կտա ձեզ, փնտրեցե՛ք եւ կգտնեք, բախեցե՛ք, եւ կբացվի ձեր առաջ»,- ասում է Քրիստոսը (Մատթ. Է 7):

Երկրորդ. ջանալ համառորեն դեմ կանգնել չար բնույթին եւ ստիպել ինքդ քեզ դեպի բարին, քանզի ջանք գործադրողները հիացնում են երկնային արքայությանը:

Երրորդ. բարին մարդու մեջ պետք է մանկության տարիներից սերմանել, քանզի դաստիարակությունից է կախված նրա ողջ կյանքը:

Չորրորդ. մտորել, որ Աստծո օրենքի եւ



ժամանակավորի դեմ գործած հանցանքների համար դատվում ես Աստծուց:

Հինգերորդ. մտորել եւ հաստատապես իմանալ, որ ցանկացողներին ու ձգտողներին ոչինչ չի խանգարում, քանի որ ամենակարող Աստված նմաններին միշտ օգնում է:

Վեցերորդ. այստեղ կա՛մ պետք է գործել մեղքի դեմ՝ Քրիստոսով, եւ ապագայում ունենալ մասնակցություն Նրա արքայությանը եւ կա՛մ պարտվել մեղքին եւ սատանային՝ դատապարտվելով հավիտենապես: Երկուսից մեկին պետք է անպայման հետեւել. սա է իրողությունը:

*Թարգմանությունը՝ Ռ. ԱՐՈՅԱՆԻ*

# ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ

## (Մոտ 1575-1625)

*Սկիզբը՝ էջ 6*

*«Նուազեցաւ Հռոմայեցին. /Եւ զաւրացաւ Հագարային»*,- այսպես է սկսում իր ողբը բանաստեղծը եւ նկարագրում *«պիղծ Սալահադինի»* արշավանքը սուրբ քաղաքի վրա:

Նկարագրված են Սալահադինի (Սալահեդդին) զորքի հարձակումը, Երուսաղեմի դիմադրությունը, անկումը, թշնամու մուտքը, ժողովրդի կոտորածը, խաչակիրների արշավանքը եւ քրիստոնյաների հետագա վիճակը: Քրիստոնյաները միաբան չեն, ինչն էլ նպաստում է թշնամու հաղթանակին: Տրապոլիսի (Տրիպոլի) կոմսը խախտում է քրիստոնեական ուխտը եւ *«դաշնադիր էր ներհակին»*: Նրան համարում է *«նենգաւոր խէթ աղուես»* եւ նմանեցնում Եղիշեի Վասակին. *«Որպես Վասակ՝ հայոց ազգին /Եղեւ մատնիչ սուրբ իշխանին»*:

Քրիստոնյաները դիմադրում են.

*Գազանաբար յարձակէին*
*Վերայ զաւրաց քրիստոնէին,*
*Իսկ նոքա ոչ թուլանային,*
*Այլ քաջութեամբ խիզախէին (78):*



Լուրը հանսում է Հռոմի պապին, *«Իշխանք 'ւ ազատք ժողովէին՝ /Հռոմայեցոց պայազատին, /Սպանիացին եւ Փարէզին, /Ալամանիկն ու Վենեսին»*: Խաչակիրները գրոհում են *«Իբրեւ զհուր ընդ եղեգին»* եւ խիզախում: Սուլթանը պարտվում է եւ երդվում *«Հնազանդիլ Հռոմայ գահին»*: Այս գործողությունների մեջ է նաեւ Կիլիկիայի հայոց պետությունը.

*Ապա դարձան ի Մէջերկրայս*
*Առ Լեւոնաւ թագաւորին,*
*Անտի դարձան յԱնտիոքին*
*Առ Ջիանայ գետովն իջին (էջ 85):*

Մոկացին նկարագրում է ռազմական գործողությունների ընթացքը՝ խոսքին հաղորդելով արագություն եւ շարժում: Նրա տարածական ընդգրկումը բավականին լայն է:

Քրիստոնյաներին համակում է ցնծության տոն, եւ նրանք փարատում են հին սուգը: Սակայն Սալահադինին փախուստի մատնելով եւ մեկ տարի էլ *«Ի յԱրաբաթ»* մնալուց հետո՝ խաչակիրները ետ են դառնում, որովհետեւ՝ *«Վասն առման սուրբ քաղաքին /Տեառնէ հրաման չեղեւ նոցին»*: Հույսը մնում է հաջորդ արշավանքը. *«Մինչ յԱստուծոյ առցեն հրաման /Եւ երամով գան միաբան»*:

Սրան հաջորդում է նրա ողբը քրիստոնեության համար, որովհետեւ քրիստոնյաները նվազում են, այլասերվում, շատանում են մեղքերը, կորցնում են միաբանությունը եւ ելնում իրար դեմ:

Այս երկը քրիստոնեական աշխարհի վերարթնացման ու միաբանման կոչ է՝ ընդդեմ իսլամական ցեղերի գրոհի: Սերունդների գիտակցության մեջ դեռեւս կենդանի էր Կոստանդնուպոլսի անկումն իր ողբալի հետեւանքներով: Ահա Կոստանդնուպոլսին նախորդել է Երուսաղեմը:

▼▼▼

Ներսես Մոկացին բանաստեղծական արվեստի առումով առանձին նորություն չի բերել: Նրա տաղերը չափական եւ հնչյունական կշռույթի տեսակետից կանոնիկ են, իշխում է միահանգությունը: Օրինակ՝ Երուսաղեմի առման ողբը գրված է 8=4+4 չափով եւ *«ին»*, մասնակի *«ան»* հանգերով: Աստվածածնին ձոնված ներբողականը եւս գրված է 8=4+4 չափով, բայց հանգային հնչեղությունը համեմատաբար բազմազան է՝ *ի, ագ, ան, ար, ալ, ի, ալ, ին, ագ, ին, էր, ին, ատ, իչ, ագ, ալ, ան, ատ, ոջ, ալ, ան, ար, ոյն, ագ, անէ, ան, ակ, ին, այ, ոյն, ավ, ոց, ավ, ով, ին, ագ, ոյ, ին, ավ, ան, ին, ի, ին, եալ, որ, ին, ալ:*

Ներսես Մոկացու լեզուն գրաբարն է, խոսքն ունի պատմողական, նկարագրական բնույթ, պատկերավոր մտածողությունը, խոսքի բնույթից ելնելով, ցայտուն չէ:

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

**Գրիգոր վրդ. ԽԼԱԹեՑԻ**

# ՁԳՈՒԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Սուրբ Գրքի խոսքն ու պատվերը նրանց, ովքեր այն ժառանգում են գալիք ժամանակների համար:*

Անեղական խոսքից ու անմատույց լույսից են կազմված իմ ճանապարհները, եւ հրաբորբոք ճառագայթարձակ ջահով պայծառացած՝ իմ նրբագույն շավիղները: Ովքեր հավատով անթերի եք՝ մտքով դիմե՛ք ինձ: Ուրախությամբ եկե՛ք իմ լույսի ծագման ետեւից, եւ ես ձեզ կտանեմ իմ քաղաքը: Ցնծալով պարեցե՛ք եւ ուրախությամբ մտե՛ք նրա դռներով: Ընտիր են նրա շինվածքները, եւ շափյուղյա՝ նրա պարսպի քարերը: Նրա վերնաշեմ դրանդին մաքուր ոսկուց է, եւ ներքնաշեմը՝ զմրուխտյա ակներից: Նրա փայտը Լիբանանից է, եւ իմ քաղաքի մանուկներն արա՛գ պատրաստվեցին: Նրա խորանների ցցերը չեն շարժվի: Նրա ճանապարհը մաքուր է, եւ նրա շավիղը՝ նորոգված: Գալիս մաքրի՛ր սիրտդ եւ կտեսնես իմ քաղաքի փառքը: Ես լուսո Հոր դուստրն եմ եւ տեսնում եմ Նրա Ծնունդի ու Բխման դեմքերը եւ ամեն ժամ համարձակություն ունեմ Նրա հանդեպ: Ովքեր կամենում եք տեսնել Նրան՝ ձեր բազուկներով բարձրացրե՛ք ինձ եւ միշտ պահե՛ք ինձ ձեր կրծքի ու սրտի վրա: Բարձրաձայն ընթերցի՛ր եւ մտքումդ պահի՛ր ինչ որ սովորում ես ինձանից: Լո՛յս ընդունիր ինձանից, առանց ամոթի մոտեցի՛ր քո տիրոջը եւ համարձակ շրջի՛ր նրա անաչառ ու ահագին հրապարակներում: Իմ դամբարներն արեգակից ու լուսնից էլ պայծառ են, եւ ով գալիս է ինձ մոտ՝ Աստծո աթոռի աջ կողմում կտեսնի ինձ: Իմ հիմքերը հավասար են անդունդների, եւ իմ գլուխը երկնակամարից էլ բարձր է: Ինձ մոտ եմ պահում բոլոր մարգարեներին եւ ինձ մոտ եմ գումարել առաքյալներին, անթիվ վարդապետների ու հայրապետների: Եկե՛ք ինձ մոտ, Սիոնի՛ մանուկներ՝ Աստծուն սիրողներ եւ Նրա օրենքը ցանկացողներ: Սովորեցե՛ք ինձ, առաջնորդներ ու ժողովուրդներ, եւ կտանեմ ձեզ իմ երկնավոր Հոր մոտ: Ինձ մոտ է բնակվում իմ Հայր Աստվածը, եւ ես Նրա Հոգու եւ Որդու քաղաքն եմ: Իմ ծաղիկը կարմրագույն է, եւ նրա հոտն՝ անճառելի: Ինձ ա՛ռ քո սրտի հավատի մեջ եւ քո ուսով բարձրացրո՛ւ ինձ: Քաղցր եմ ես ձեր կոկորդում, եւ իմ համն ախորժ է ծամելիքներում ձեր, ովքեր հավատով կարողանում եք ճաշակել ինձ: Ես քո սրտի բանալին եմ, որդյա՛կ իմ, եւ իմ զորությունը շատերի մեջ բավականին է: Հերձվածողներին ինձ մի՛ ընծայիր, որովհետեւ թերահավատներին ես հակառակ եմ: Շա՛տ կողբաս, եթե ինձ նրանց տաս, որովհետեւ աղբով ու ժանգով են լցնում ինձ: Հավատարիմ մարդկանց տուր ինձ, եւ տգետից, որ փնտրում է, մի՛ պահիր ինձ: Իմ դիմաց քեզ գրավականՆ ընդունիր նրանց ճշմարիտ հավատը: Տե՛ս, մի՛ մոռանա իմ սերը: Քո շուրթերով՝ սիրով համբուրի՛ր ինձ եւ քո սրտի ու հոգու սենյակներո՛ւմ բնակեցրու ինձ: Ճարտասան իմաստուններիՆ շնորհիր ինձ, որպեսզի իմ լույսի միջոցով պախարակեն հերձվածողներին:



**Ժառանգողը պատասխանում է.**

Վա՛յ ինձ, եթե ձրի կամ անխորհրդաբար քեզ տամ թերահավատներին կամ տգետներին, իմ հավա՛տ եւ հույս: Այլ մտքովս հոգուս մեջ, հոգովս շնչիս մեջ, շնչովս արյանս մեջ, արյամբս մարմնիս մեջ եւ մարմնովս մարմնիս կաշվի մեջ՝ ծրարած պահում եմ քեզ »իմ կինամոՆ, նարդո՛ս ու ստաշխ: Եվ երբ հոգիս մարմնիցս բաժանվի, հնարավոր չէ, որ հեռանամ քեզանից, այլ մարմնիս հետ կմտցնեմ քեզ մահվան գուբը, որ դու Ահավոր Օրն իմ գլուխը պսակես:

***Գրաբարից փոխադրեց Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԸ***

# ՄԻ՛ ՇՆԱՑԻՐ

*Սկիզբը՝ էջ 6*

Շատ կանայք պատճառաբանում են, թե դժվարությունից ելնելով՝ երեխաներին սնելու համար են գնում շնության, սակայն մեզանից մի քանի սերունդ առաջ էլ են եղել դժվարություններ. մեր տատերն առավե՛լ ծանր կյանքով են ապրել, սակայն սրբությամբ են պահել իրենց՝ չգնալով ծայրահեղ քայլերի: Որեւէ դեպքում չի կարելի արդարացնել շնությունը, այլ պետք է անկեղծորեն զղջալ եւ ետ դառնալ այդ կորստաբեր ճանապարհից:

**- Տե՛ր հայր, այսօր հաճախ ենք լսում, որ բարոյականության չափանիշները փոխվել են, եւ այն, ինչը երբեւէ դատապարտվում էր ոչ միայն Եկեղեցու, այլեւ հասարակության կողմից, այսօր կարծես դարձել է սովորական, նույնիսկ խրախուսելի: Մի՞թե բարոյականության չափանիշները կարող են փոխվել:**

- Ոչ մի չափանիշ էլ չի փոխվել: Ճշմարտությունը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, նույնն է երեկ, այսօր եւ հավիտյան: Քրիստոսը մարմնացավ, ապրեց երկրի վրա, քարոզեց, մարդկության փրկության համար խաչի անարգ մահը հանձն առավ, հարություն առավ եւ համբարձվեց: Այս է ուսուցանում մեզ քրիստոնեությունը, որը փոփոխման ենթակա չէ: Անաստված եւ անհավատ մարդու համար ոչ մի չափանիշ չկա: Այդպիսի մարդը կենդանուց չի տարբերվում եւ քանի որ իրեն համարում է կապիկի հետնորդ, բնական է, որ չի ենթարկվի ոչ մի բարոյական օրենքի: Սբ Գիրքն ասում է. «Մարդը պատվի մեջ էր, բայց չհասկացավ, հավասարվեց անբան անասուններին...»: Մարդը, ի տարբերություն կենդանիների, ունի բանական հոգի, հոգեւոր էակ է, կարող է զանազանել չարը բարուց, պաշտել Աստծուն, մտածել, ստեղծագործել: Մարդն օժտված է ազատ կամքով, որով ընտրում է կա՛մ չարը, կա՛մ բարին: Շատերն են այսօր խեղդում իրենց խղճի ձայնը՝ գնալով մոլորության, պղծության ճանապարհով: Նորից եմ ասում, որ ամուսնացած տղամարդկանց եւ կանանց համար արտամուսնական կապը շնություն է եւ կդատապարտվի Աստծու կողմից: Իսկ ընտանիք չունեցողը պետք է սրբությամբ համբերի մինչեւ ամուսնությունը՝ խնդրելով



Աստծուն արժանացնել իրեն սուրբ պսակին, որպեսզի պսակադրության օրն առանց ամոթի եւ խղճի խայթի կանգնի Աստծու սուրբ խորանի առջեւ՝ արժանանալով աստվածային օրհնություններին:

**- Ուրեմն ինչպե՞ս է հնարավոր մեր օրերում մարմինը սուրբ պահել՝ հեռու մնալով շնության մեղքից:**

- Հարկ է մշտապես վերահսկել միտքը, հեռու մնալ աչքի եւ սրտի ցանկասիրությունից: Ապավինելով Տիրոջը՝ հավատով, հույսով, աղոթքներով, պահեցողությամբ, հավիտենական կյանքի հույսով պայքարել գայթակղությունների ու փորձությունների դեմ:

*Հյուրընկալեց*
***Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր. 4. 2. 2009 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**